

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### ՈՐՊԵՍՋԻ ԿԱՆԽՈՒԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԸ

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Մօտ տարի է մը ի վեր շարունակուող Սուրիական տագնապը, որ համաձայն Մարդկային իրաւանց Սուրիական Մարմնի Դիտարկման, ամէն օր տասնեակներով զինեալ եւ անմեղ զոհեր կը խլէ՝ կ'ենթադրուի, հասած ըլլալ իր յարաբերական լուծման կամ, ընդհակառակը, կորստաբեր փաղափարակաւ պատերազմի ընտրանքի մը հանգրուաններուն:

Այդ ընտրանքները դժմանդիման կը բերեն մէկ կողմէ սուրիական իշխանութիւնները, որոնք երկրէն ներս ծնունդ առած ընդդիմութեան ետին, արտաքին հովանաւորութիւն վայելող տէրօրիստական կազմակերպութիւն կը տեսնեն, իսկ միւս կողմէ, ժողովրդավարական կարգեր ստեղծելու հեռանկարներով հրապարակ իջած՝ Ասատեան իշխանութեան տապալումը առաջադրող յեղափոխականացած ժողովրդական շարժում մը, որ կը վայելէ ժողովրդական ուժեղ քիչունք, նաեւ զօրակցութիւնը Արաբական Լիգայի, Եւրամիութեան եւ ԱՄՆի:

Մինչեւ օրս շարունակուող, Սուրիական ըմբոստ փաղանքներու առօրեայ անխնայ ունեւորումներ, օրինաւոր բանակի եւ ընդդիմադիր կարգաբոլոր ու ժողովրդական զինեալ ուժերու միջեւ տեղի ունեցող ամէնօրեայ բախումներ, իրենց ետին կը բողոքում տասնեակներով զինեալ ու անմեղ զոհեր:

Տագնապի ստեղծումէն ասդիւն, փաղափարակաւ պատերազմի սահմաններուն մօտեցող ներկայ յեղափոխականացած շարժում մը, սուրիացի ասպնջական ժողովուրդին արժած է աւելի քան ինը հազար զոհեր: Երկրէն քաղաքացիազար փախուցիկներու արտագաղթը էպի սահմանակից երկրներ: Եւրամիութեան անդամ երկիրներուն՝ Ֆրանսայի, Անգլիոյ, Սպանիոյ, ԱՄՆ-ի եւ արաբական ծոցի երկիրներու դեսպանատուներու փակում, առանց հաշուելու միութեան, ապահովական, առողջապահական եւ այլ մակարդակի նգնաժամեր՝ որոնք տակաւ անգապելի մագլցումներ կ'արձանագրեն, երկիրը առաջնորդելով դէպի անդարմանելի տարբաղադրում: Այս բոլորի գուգահեռ սակայն, ինչպէս դիտել տուի մեր Անկիւնի նախարան խօսքին մէջ, սկսած է ուրուագծուիլ նոր յոյսեր, (հաւատարի կամ ոչ՝ չենք գիտեր, մեր կասկածը կ'ենթադրէ դիւանագիտական լարախաղացութիւն) որոնք կրնան Սուրիան առաջնորդել դէպի տագնապի խաղաղ լուծման,

Շաբ.ը էջ 18

## ՄԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ՍԵՈՒԼԻ ՄԵՋ ՔՆՆԱԴԱՏԱԾ Է ԱԼԻԵԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԾ «ԲԱՑԱՅԱՅՏ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՈՒՌԹԻՒՆԸ»

Քորէայի Հանրապետութիւն գտնուող նախագահ Սերժ Սարգսեան Մարտ 27-ին Մէուլի մէջ մասնակցած է Միջուկային Անվտանգութեան 2012-ի միջազգային գագաթնաժողովին:

ՀՀ ղեկավարը գագաթնաժողովին հանդէս եկած է ելոյթով: Ինչպէս կը տեղեկացնէ Հայաստանի նախագահի մամուլի ծառայութեան տարածած հաղորդագրութիւնը, Սերժ Սարգսեան նախ շնորհակալութիւն յայտնած է գագաթնաժողովի կազմակերպիչներուն եւ անձամբ նախագահ Լի Միւն-Պազին՝ համընդհանուր անվտանգութեան համար առանցքային նշանակութիւն ունեցող այդ կարեւոր հաւաքը հիւրընկալելու համար: Հանրապետութեան ղեկավարը նաեւ բարձր գնահատած է Ամերիկայի նախագահ Պարաք Օպամայի շարունակական ջանքերը՝ 2010-ի Ուաշինկթընեան գագաթնաժողովէն ի վեր:

«Միջուկային անվտանգութիւնը եղել է մնում է Հայաստանի համար առաջնային կարեւորութեան ինդիք: Ցանկալի արդիւնքներ գրանցելու նպատակով մենք հետեւողականօրէն եւ պատրաստակամօրէն աջակցել եւ իրականացրել ենք առաջարկուող ծրագրերը, կոնկրէտ քայլեր ենք ձեռնարկել՝ վերահսկողութեան գործուն մեխանիզմ ստեղծելու ուղղութեամբ», - ընդգծած է Սերժ Սարգսեան:



Սերժ Սարգսեան ելոյթ կ'ունենայ Միջուկային Անվտանգութեան գագաթնաժողովի ընթացքին

Հանրապետութեան ղեկավարը նշած է նաեւ, որ ՄԱԿ-ի Միջտարածաշրջանային յանցաւորութեան եւ արդարադատութեան հետազոտական հիմնարկի հետ մագրոսականութեամբ եւ աջակցութեամբ, Հայաստան կ'իրականացնէ մարդու ժի վերապատրաստման եւ

մագրոսային ճարտարագիտական յագեցման ծրագիր: Նախագահի խօսքով, Հայաստանի Հանրապետութիւնը ըստ ամենայնի կը նպաստէ ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդի 1540 բանաձեւի իրականացման:

«Ուաշինկթընի գագաթնաժողովում բոլորս խիստ կարեւորեցինք Աթոմային էներգիայի միջազգային գործակալութեան կեդրոնական դերը միջուկային անվ-

Շաբ.ը էջ 4

## ՀԱԿԱՌԱԿ ԲՆԱԿԶՈՒԹԵԱՆ ԹԻՒՆՈՒԱԶՈՒՄԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆՏՐՈՂՆԵՐՈՒ ԹԻՒԸ ԱԲԵԼՑԱԾ Է

Ոստիկանութեան անձնագրային եւ վիզաներու վարչութեան պետ, գնդապետ Յովհաննէս Քոչարեան «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցի ընթացքին յայտնած է, որ այս օրուայ դրութեամբ Հայաստանի ընտրացուցակներուն վրայ կայ 2 միլիոն 485 հազար 844 ընտրող: Երեւան քաղաքի ընտրողներու թիւը 860 հազար 388 է:

Փետրուարի սկիզբին Ազգային Վիճակագրական Ծառայութիւնը (ԱՎԾ) հրապարակեց մարդահամարի նախնական տուեալները, որոնց համաձայն Հայաստանի բնակչութեան թիւը ներկայիս 2 միլիոն 870 հազար է: ԱՎԾ-ի տուեալներով՝ 2001 թուականի մարդահամարի արդիւնքի համեմատութեամբ բնակչութիւնը պակասած է 415 հազարով:

Ռատիոկայանի այն հարցին, թէ ինչպէ՞ս կրնայ ըլլալ որ, 2012-ին ընտրութիւններու մասնակցող քաղաքացիներու թիւը աւելի է, քան եղած է 2008-ին, Քոչարեան պատասխանած է. - «Պատճառը բնակչութեան պետական ռեգիստրում հաշուառուող անձանց թուաքանակի աճն է: 2012 թուականի ընտրացուցակներում ընդգրկուել են 359 հազար 614 ընտրողներ, որոնք ընդգրկուած չեն եղել 2008 թուականի նախագահական ընտրութիւնների ժամանակ կազմուած

ցուցակներում: Դա բնակչութեան պետական ռեգիստրի վերլուծութիւնների արդիւնքներն են, ընդ որում 185 հազարից աւելին 2008 թուականի Փետրուարի 18-ի դրութեամբ 18 տարեկան չէին, հետեւաբար ցուցակներում չեն երեւցել, բայց արդէն այս նոյն թիւով ընտրողներ 18 տարեկանը լրանալու կապակցութեամբ ձեռք են բերել ընտրական իրաւունք եւ, բնականաբար, յայտնուել են ցուցակներում: Բացի այդ 170 հազարից աւելի քաղաքացիներ հաշուառուել են բնակչութեան պետական ռեգիստրում, նրանք նախկինում հաշուառումներ չեն ունեցել»:

Ըստ Քոչարեանի, մարդիկ արձանագրուած են նպաստներ ստանալու համար: «Նպաստներ ստանալու համար օրինադրութեամբ պահանջուած էր փաստացի հաշուառման առկայութիւն, ինչը ստիպեց քաղաքացիներին անպայման հաշուառուել: Բացի այդ 2008 թուականից սկսած անձնագիր ստանալու համար մարդիկ պէտք է կանգնէին հաշուառման», - ըսած է ան:

«Զորքող ինքնիշխանութիւն» օրաթերթը տպագրած է թիւ 9 ընտրատարածքի ընտրացուցակի լուսանկարը: Ցուցակի 661-1223-րդ տեղերուն ըստ յաջորդականութեան 562 սողերու

Շաբ.ը էջ 4

## ՕՊԱՄԱ ԵՒ ԷՐՏՈՂԱՆ ԽՕՍԱԾ ԵՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՍԻՆ



Օպամա եւ էրտողան Մէուլի հանդիպման ընթացքին

Հարաւային Քորէայի մայրաքաղաք՝ Մէուլի մէջ տեղի ունեցող Միջուկային Անվտանգութեան գագաթնաժողովի ընթացքին, առանցին հանդիւրում կայացած է ԱՄՆ-ի նախագահ Պարաք Օպամայի եւ Թուրքիոյ վարչապետ Ռեճեփ Թայիպ Էրտողանի միջեւ: Հանդիպման ընթացքին, ի շարս այլ հարցերու, քննարկուած է նաեւ Լեռնային Ղարաբաղի ինդիքը:

«Օպամային յիշեցուցի, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը 20 տարի է ի վեր չի կրնար լուծել Հայաստանի

Շաբ.ը էջ 5

# ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ԱՄԵՆԱՅՈՒՄԱԼԻ ՄԵԹՈԴԸ

## ՄԱՐԿ ՆՇԱՆՆԱՆ

Էլլի սիրուն բան չստացուեց: Պատգամաւորութեան թեկնածուների ցուցակները հրապարակուեցին, եւ պարզուեց, որ ինչպէս միշտ՝ գործ ենք ունենալու «աջաբասանդալի» հետ: Իշխանական կուսակցութիւնների ցուցակներում յայտնուեցին մինչ այդ իբր ընդդիմադիր գործիչներ, իբր ընդդիմադիր կուսակցութիւնների ցուցակներում յայտնուեցին ակնյայտօրէն իշխանամէտ դէմքեր եւ այլն, ու իբր դա քիչ էր՝ յետոյ էլ պարզուեց, որ նոյն ընտրատարածքներում մեծամասնականով իրար դէմ են պայքարելու ընդդիմութեան լիդերները եւ նոյնիսկ միասնական ցուցակ ներկայացրած ուժերի «հովանաւորեալները»: Սերժ Սարգսեանն, իհարկէ, պղտոր ջրում ձուկ որսալու մեծ մասնագէտ է, եւ եթէ այսպէս շարունակուի՝ նա ամենայն հաւանականութեամբ կը հասնի իր նպատակին:

Իսկ ի՞նչ անել: Երեւանի թիւ 7 ընտրատարածքում, օրինակ, Նիկոլ Փաշինեանն առաջադրուեց Սամուէլ Ալեքսանեանի դէմ, ու տասը ընտրատարածքում Բաֆֆի Յովհաննիսեանը տրտինգ տալով յայտնուեց ԿԸՅ-ում, գրանցուեց նոյն ընտրատարածքում, յետոյ էլ սկսեց արդարանալ՝ «կոմանդո»-ր, եւ ակամայ: Ամէն դէպքում՝ լաւ բան չստացուեց: Հասկանալի է, չէ՞, որ գրականութեան մէջ է Բաֆֆին «Սամուէլի» հեղինակը, իսկ քաղաքականութեան մէջ կարող է հակառակը լինել: Եւ որպէսզի այսօրինակ կասկածները փարակուեն, մենք, օրինակ, կ'առաջարկէինք հետեւեալը: Թող երկու թեկնածուներն, ասենք, հինգական մարդ յատկացնեն, կազմեն աշխատանքային խումբ, որն էլ այդ ընտրատարածքում սոցիոլոգիական հետազոտութիւն կ'անցկացնի: Ի՞նչ է պատահել, միասին կը կազմեն հարցաթերթիկը, միասին կը մտնեն մարդկանց տները, միասին էլ կը

մշակեն արդիւնքները: Հաստատ իրար չեն խաբի: Սկզբից էլ թող պայմանաւորուեն, որ «պարտուողը» հանում է իր թեկնածութիւնը միւսի օգտին: Ժամանակ, բարեբախտաբար, դեռ կայ, մարդիկ էլ կ'իմանան, որ փաստօրէն՝ գոնէ մեծամասնականով իրենք ընդդիմութեան միասնական թեկնածուին են ձայն տալու:

Այս մոդելն, ի դէպ, կարող է աշխատել բոլոր այն ընտրատարածքներում, որտեղ ընդդիմադիր տարբեր ուժերը թեկնածուներ ունեն: Նախ՝ դա կը լինի նորմալ սոցիոլոգիական հետազոտութիւն, երկրորդ՝ լրացուցիչ քարոզչութեան հնարաւորութիւն կը տայ, երրորդ՝ ընդդիմութեան թեկնածուներն իրարից ձայներ չեն խլի:

Համագործակցութեան այս տարբերակն, ի դէպ, նաեւ հնարաւորութիւն կը տայ պարզել, թէ իրականում ով ինչի համար է առաջադրել իր թեկնածութիւնը, ինչ ներքին պայմանաւորուածութիւնների մէջ է եւ տակից «ինչ խաղեր է տալու»:

Կուսակցութիւններն ինչքան ուզում են՝ թող իրար դէմ պայքարեն, բայց ունենան միասնական թեկնածու ու միասնաբար էլ պայքարեն ընտրակեղծիքների դէմ:

Կը ստացուի այս համագործակցութիւնը՝ լաւ, չի ստացուի՝ ուրեմն Սերժ Սարգսեանն ուրիշ յաճախորդներ էլ ունէր, կամ էլ՝ օլիգարխիկները համաձայնուել են լրացուցիչ «ծախսի տակ ընկնել»: Ընտրութիւնների ընթացքում կամ յետոյ յաճախորդներն, իհարկէ, կը բացայայտուեն, բայց ո՞ւմ է պէտք յետին թիւով բացայայտումը: Ընտրողներն արդէն այսօր պիտի իմանան, թէ իրականում ով ով է եւ յանուն ինչի է պայքարում: Այնպէս որ՝ բացայայտումների մեկնարկը տրուած է:

«ԶՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇՆԱՆՈՒԹԻՒՆ»

# «ՍՏՐԱՏԵԳՆԵՐԻ» ՏԱՐԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԸ

## ԱՐԱՄ ԱՐԱՀԱՄԵԱՆ

Թէ իշխանութեան, թէ ընդդիմութեան ներկայացուցիչներին որ հարցնես, նրանք քաղաքական եւ, մասնաւորապէս, նախընտրական պայքարի խոշոր ստրատեգներ են, ինչպէս նաեւ տիրապետում են մարտավարական բոլոր նրբութիւններին: Բայց արի ու տես՝ այդ անկրկնելի «ասերը» չեն տիրապետում ոչ միայն «բարձրագոյն պիլոտաժի» հնարքներին, այլեւ շատ տարրական ձեւով չեն հաւաքում եւ չեն ամփոփում տեղեկատուութիւնը: Ընդ որում, խօսքը փոքրիկ Հայաստանի մասին է, որտեղ բոլորը բոլորին ճանաչում են, որտեղ կայ ընդամէնը մօտ 1900 ընտրական տեղամաս ու ընդամէնը 90 համամասնական եւ 41 մեծամասնական տեղ: Նման պայմաններում ինչպէ՞ս կարելի է, կոպիտ ասած, իրարից խաբար չլինել: Այլ կերպ ինչպէ՞ս բացատրել, որ մեծամասնական 15 ընտրատարածքներում իշխանամէտները, իսկ 10-ում՝ ընդդիմադիրները «կռիւ են տալու» իրար դէմ: Կամ՝ որ թիւ 19 եւ 22 ընտրատարածքներում իրար դէմ թեկնածութիւններ են դրել 3-ական ՀՀԿ-ականներ: Էլ չեմ ասում ՀՀԿ-ական եւ ԲՀԿ-ական «մեծամասնականներ»

րի» մրցակցութեան մասին՝ որքան յիշում եմ, այդ երկու կուսակցութիւնները կողմից յուշագիր են ստորագրել:

Բայց իշխանական դաշտում կրկնակի (եռակի) ռեսուրս ծախսելն ու իրար դէմ աշխատելը այնքան վնասակար չէ այդ ճամբարի համար: Նախ՝ այնտեղ հաւաքուել են ոչ աղքատ մարդիկ, եւ իրենց մրցակցութիւնն, ի վերջոյ, հանգեցնում է նրան, թէ ով աւելի շատ փող կը ծախսի: Երկրորդ՝ այդ ճամբարն ընդհանրապէս հսկայական «ֆորաս» ունի՝ իր նիւթական եւ վարչական ռեսուրսներով, այնպէս որ՝ նրանց ներկայացուցիչները կարող են իրենց թոյլ տալ իրար դէմ թեկնածութիւններ դնելու շուրջը:

Այլ հարց է ընդդիմադիր ուժերը, որոնց օգտին մարդիկ գալիս են քուէարկելու իրենց համոզմունքներից, ոչ թէ նիւթական շահագրգռութիւնից ելնելով: Եւ այստեղ առաւել եւս տարօրինակ է, որ ՀԱԿ-ի, «Ժառանգութեան» եւ ՀՅԴ-ի միջեւ չկայ տեղեկատուութեան տարրական փոխանակման մեխանիզմ, մասնաւորապէս՝ թէ ով որտեղ է իր թեկնածութիւնը դնում: Ես, իհարկէ, հաւատում եմ Բաֆֆի Յովհաննիսեանին, երբ նա ասում է, թէ չզիտէր, որ թիւ 7 ընտրատարած-

# ՕՊԱՄԱՅԻ ԵՒ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

## ՋԵՅՄՍ ԹԱԿՈՐԵԱՆ

Երբ Սերժ Սարգսեանը հռչակեց ՀՀԿ «Հաւատանք, որ փոխուենք» կարգախօսն, ու Հանրապետականները ստիպուած եղան սկսել այդ կարգախօսի հանրային հիմնաւորումների որոնումները, նրանք կանգնեցին նաեւ մէկ այլ բացատրութեան որոնման անհրաժեշտութեան առաջ:

Բանն այն է, որ հանրութիւնը շատ արագ նկատեց Սերժ Սարգսեանի եւ Պարակ Օպամայի կարգախօսների նմանութիւնը: ԱՄՆ նախագահը երբ ընտրարշաւ էր անցկացնում նախագահ դառնալու համար, հռչակեց «Մենք հաւատում ենք, որ կարող ենք փոխուել» կարգախօսը:

Պլազիատի վերաբերեալ հանրային դիտողութիւններին ՀՀԿ-ն պատասխանում էր, որ միանգամայն տրամաբանական է, երբ դրում են այդպիսի կարգախօսներ եւ առաջնորդները նախանշում են փոփոխութիւններ, եթէ երկրում կայ դրանց կարիքը՝ անկախ թէ որ երկրի մասին է խօսքը:

Իրականում, Օպամայի դէպքում կարգախօսը տրամաբանական է, իսկ ահա Սերժ Սարգսեանի դէպքում՝ հազիւ թէ: Տրամաբանականութիւնը տուեալ պարագայում բխում է ոչ թէ անձերի որակական յատկանիշներից, տեսակից, վստահելիութիւնից եւ այլ հանգամանքներից, այլ նախ եւ առաջ կարգավիճակներից:

Պարակ Օպաման հաւատալով փոխուելու մասին իր կարգախօսը հռչակեց, երբ նոր էր պատրաստում դառնալ նախագահ: Այսինքն, նա այդ ժամանակ դեռ նախագահ չէր: Աւելին, նրա կուսակցութիւնն այդ ժամանակ իշխանութեան չէր: Նա գալիս էր հանրապետական վարչակազմին փոխարինելու: Ու քանի որ երկրում էլ առաջացել էր լրջագոյն ֆինանսական ճգնաժամ՝ համակարգային սպառնալիքներով, իշխանութեան եկող Օպաման հռչակեց «Մենք հաւատում ենք, որ կարող ենք փոխուել» կարգախօսը: Իսկ հիմա, եթէ օրինակ Պարաք Օպաման նախագահի երկրորդ ժամկէտին ընդառաջ կրկին այդօրինակ մի կարգախօս առաջ քաշի, ամերիկացիները թերեւս նրան առնուազն կը հարցնեն, թէ պարոն նախագահ, իսկ ինչով էիք զբաղուած անցած չորս տարիների ընթացքում, եթէ հիմա էք սկսել մեզ հաւատացնել, կամ եթէ մինչեւ հիմա մեզ հաւատացնում էք, թէ կարող էք փոխուել կամ կարող ենք փոխուել:

Սերժ Սարգսեանն արդէն չորս

տարի է Հայաստանի նախագահ է, դրանից առաջ մէկ տարի Հայաստանի վարչապետն էր եւ խորհրդարանի իշխող մեծամասնութեան կուսակցապետը: Այսինքն, մօտ 5-6 տարի է, որ Սերժ Սարգսեանն իշխանութեան առանցքային դէմքն է, իսկ նրա ղեկավարած Հանրապետական կուսակցութիւնն արդէն 10 տարի եւ աւելի իշխող կուսակցութիւն է:

Այդ պայմաններում, «հաւատանք, որ փոխուենք» կարգախօսը դառնում է անտրամաբանական, որովհետեւ եթէ Սերժ Սարգսեանն ու ՀՀԿ-ն լինէին իսկապէս փոփոխութեան ունակ քաղաքական ուժեր, ապա անցած 6, 5 կամ 4 տարիների ընթացքում հանրութիւնը պէտք է նրանցից ստացած լինէր, տեսած լինէր, շոշափած լինէր հական փոփոխութիւններ, կամ փոփոխութիւնների հակա գործընթաց, եւ կարգախօսի կարիք այլեւս չպէտք է լինէր, որովհետեւ հասարակութիւնը գործով տեսած ու համոզուած՝ եւ հետեւաբար նաեւ հաւատացած կը լինէր, որ հենց այդ ուժն է երկիրը փոխողը:

Հաւատի եւ փոփոխութեան մասին կարգախօսներ կարող է հռչակել այն ուժը կամ գործիչը, որը Հայաստանում երբեք չի եղել իշխանութեան, որը չի մասնակցել համակարգային այս կամ այն փուլին, գործընթացին, որը նոր գործիչ է, հանրութեան համար յայտնութիւն գործիչ է: Առաւել եւս իշխող կողմից իր կուսակցութիւններում աջակցութիւնը բացարձակ աւելորդութիւն է, անհիմն յիշատակում:

«ԼՐԱԳԻՐ»

**ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹ-ԱԹԵՐԹ**  
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Մրջանի  
 ԽՄԲԱԳԻՐ՝  
 ՏՕԹԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ  
 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
 ՍԱՐԻԷԼ ՍՈՒՆՅԵԱՆ  
 ՍԱՐԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ  
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ  
 ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
 ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ  
**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com  
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August  
 ANNUAL SUBSCRIPTION RATES:  
 USA \$50.00, \$80.00 (First Class)  
 Canada \$125.00 (Air Mail)  
 Overseas \$225.00 (Air Mail).  
 All payments must be made in US funds & Drawn on US banks.  
 Periodicals Postage Paid  
 at Pasadena CA.  
 Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

«ԱՌԱԻՕՏ»



ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԸ ՀԱՆԵՑ ԻՐ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ ԹԻՒ 7 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԻՑ

«Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեանը հանեց իր թեկնածութիւնը մեծամասնական ընտրակարգով Երեւանի թիւ 7 ընտրատարածքում անցկացուելիք պատգամաւորի ընտրութիւններին:

«Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդը թիւ 7 ընտրատարածքից իր թեկնածութիւնը հանելու որոշման մասին յայտնեց ի պատասխան լրագրողների հարցերի:

«Որպէսզի մենք էլ տեսնենք, որ կեանքում եւ քաղաքականութիւնում պէտք է լինի ուշ կամ կանուխ, կամ երբեք ուշ պէտք է, որ լինի, ես որոշել եմ այսօր իմ թեկնածութիւնը հանել Երեւանի 7-րդ ընտրատարածքի պայքարից եւ միաժամանակ մաղթանք կատարել՝ մաղթանք այն բանի համար, որ մեզ մօտ պակասում է», - ասաց Յովհաննիսեանը՝ շարունակելով. - «Մաղթում եմ ամենայն բարիք եւ յաջողութիւններ՝ իշխանական բոլոր թեկնածուներին, մաղթում եմ ամենայն բարիք եւ յաղթանակներ՝ ընդդիմադիր բոլոր թեկնածուներին: Յետայսու «Ժառանգութիւն»-ը կը զնայ մեծամասնական պայքարի 7 թեկնածուներով»:

Յիշեալ ընտրատարածքում առաջադրուած են նաեւ յայտնի

գործարար Սամուէլ Ալեքսանեանը եւ ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսի անդամ, «Հայկական Ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանը: Անցած շաբաթ Յովհաննիսեանը յայտարարել էր յօգուտ Փաշինեանի իր թեկնածութիւնը հանելու պատրաստակամութեան մասին:

Հայաստանի քաղաքագէտների միութիւնում կայացած լսումների ժամանակ Րաֆֆի Յովհաննիսեանը յայտարարեց նաեւ, որ «Ժառանգութիւն»-ը ՀՅ Դաշնակցութեանը եւ Հայ ազգային կոնգրէսին (ՀԱԿ) առաջարկել է ընդհանուր համաձայնութեան գալ բոլոր մեծամասնական ընտրատարածքներում միասնական ընդդիմադիր թեկնածուի պաշտպանելու վերաբերեալ:

Ըստ նրա՝ Դաշնակցութիւնը այս առաջարկը համարել է ժամանակավրէպ:

Հանդիպում է եղել նաեւ Հայ ազգային կոնգրէսի ներկայացուցչի հետ եւ առաջարկուել է, մասնաւորապէս, որ 21 ընտրատարածքներում միասնաբար զօրակցեն ՀԱԿ-ի թեկնածուին, 7 ընտրատարածքներում՝ «Ժառանգութեան» թեկնածուին, մնացած 13-ում՝ Դաշնակցութեան թեկնածուին: Առաջարկը, սակայն, մերժուել է:

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ՝ Ի ՊԱՏԱՍԽԱՆ ՌԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Հայոց համազգային շարժման նախագահ Արամ Մանուկեանը Tert.am-ի հետ զրոյցում, անդրադարձաւ իր անդամակցութիւնը ընտրութիւններում մեծամասնական ընտրակարգով առաջադրուած թեկնածուների փոխադարձ սատարման «Ժառանգութիւնից» ՀԱԿ-ին արուած առաջարկի վերաբերեալ Րաֆֆի Յովհաննիսեանի յայտարարութեանը, նշեց, որ նմանատիպ մի առաջարկ էլ «Ժառանգութեան» աւելի վաղ արուել է ՀԱԿ-ի կողմից, որը սակայն «թողնուել է յետոյ»:

«Իսկ դրանից առաջ մենք էնքան լաւ առաջարկ էինք արել, որը մերժուեց», - ասաց Արամ Մանուկեանը՝ մանրամասնելով, որ «Ժառանգութեան» իրենք առաջարկել էին այդ հարցերը քննարկել մինչեւ առաջադրումների փուլը, սակայն այնտեղից մերժել էին՝ առաջարկելով քննարկել յետոյ:

Իսկ առաջադրումներից յետոյ ըստ Արամ Մանուկեանի շատ դժուար է դառնում պայմանաւորուածութիւնների ձեռք բերումը: Այնուամենայնիւ, Արամ Մանուկեանը ողջունում է Րաֆֆի Յովհաննիսեանի քայլը եւ համարում, որ նա իր քայլերի տէրն է՝ մեկնաբանելով «Ժառանգութեան» առաջնորդի՝ թիւ 7 ընտրատարածքից ինքնաբացարկով հանդէս գալու որոշումը:



ՀՀԾ նախագահ Արամ Մանուկեան

Մեկնաբանելով Րաֆֆի Յովհաննիսեանի կողմից բոլոր ընդդիմադիր թեկնածուներին յաջողութիւն մաղթելը, Արամ Մանուկեանն ասաց. «Րաֆֆին շատ լաւ է արել, որ յաջողութիւն է մաղթել, ես էլ եմ յաջողութիւն մաղթում»:

ԱՅՐՈՆ ԱԴԻԲԵԿԵԱՆԸ ՉԻ ՀԱՒԱՏՈՒՄ »ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՊԱՑԻ ԲԱՐԵՎԱՍՆԵՐ»-Ի ՍՈՑԻԱԼԻՍՏԱՆԸ

Սոցիոլոգ Ահարոն Ադիբեկեանը հաւաստի էր համարում «Հայաստանի եւրոպացի բարեկամներ» կազմակերպութեան «Հարցում. նախընտրական պատկերը Հայաստանում» վերնագրով վերջերս հրատարակած հետազոտութիւնների արդիւնքները:

Ըստ այս կազմակերպութեան հրատարակած թուերի՝ գրեթէ բոլոր հարթութիւններում «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը գերազանցում է միւս կուսակցութիւններին եւ դաշինքներին, այդ թւում եւ Հայաստանի հանրապետական կուսակցութեանը: Օրինակ՝ «Ում կը տայիք ձեր ձայնը, եթէ ընտրութիւնները լինէին այս կերպի» հարցին, հարցուած հայաստանցիների պատասխանները բաշխուել են հետեւեալ կերպ. ԲՀԿ՝ 41%, ՀՀԿ՝ 37%, 5 -ական տոկոս Հայ յեղափոխական դաշնակցութիւն կուսակցութեանը եւ Հայ ազգային կոնգրէս ընդդիմադիր դաշինքին եւ 4% «Ժառանգութիւն» կուսակցութեանը:

Սոցիոլոգը ներկայացրեց իրենց կողմից անցկացուած վերջին

«ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹԵԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱԿԱՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ Է».-ԶՅԱՆԳԻՐԵԱՆ

«Արտակարգ դրութեան իրաւական ուժի մասին» օրէնքը հակասահմանադրական է: Լրագրողների հետ հանդիպմանն այս մասին ասաց ՀԱԿ իրաւական ծառայութեան համակարգող Գագիկ Զհանգիրեանը:

Նա չի շեղարկ, որ Հայաստանի Սահմանադրութեամբ յստակ ամրագրուած է՝ բանակն իրաւունք չունի մասնակցել քաղաքական գործընթացներին:

Միջազգային պրակտիկայում նոյնպէս, ըստ Զհանգիրեանի, դա ընդունուած չէ. գարգացած եւ ժողովրդավար երկրները նման օրէնքներ չունեն:

«Հարցն այն է, որ մենք սարսփած ենք, թէ՛ նորից բանակը կը հանեն ժողովրդի դէմ, եւ մենք բոլորս վախից կը հիւանդանանք: Հարցն այն է, որ այս օրէնքի ընդունմամբ փորձում են լեզալացնել եւ օրինական տեսք տալ 2008-ի Մարտի 1-ին արտակարգ դրութիւն յայտարարելու ապօրինի եւ հակասահմանադրական հրամանագրին», - ասաց նա:

Գագիկ Զհանգիրեանի խօսքով՝ այս փուլում իշխանութիւններին ձեռնտու էր նման օրէնք ընդունելը: «Ինչո՞ւ ընտրական թոհուբոհի մէջ ընդունեցին այս օրէնքը: Մի կողմից՝ այս փուլում թէ՛ մամուլը, թէ՛ հասարակութիւնը զբաղուած են ընտրական խնդիրների քննարկմամբ, ուշադրութիւնը մի քիչ բթացած է:



ՀԱԿ իրաւական ծառայութեան համակարգող Գագիկ Զհանգիրեան

Երկրորդ՝ սա մեսիջ է հասարակութեանը, թէ՛ գիտէ՞ք, մենք որեւէ բանի առաջ կանգնող չենք, մենք հիմա նաեւ այդպիսի օրէնք ունենք, բարի եղէք՝ ձեզ զուսպ ու չափաւոր պահէք», - կարծում է նա:

Ընդդիմութեան անդամները յոյս ունեն, որ իշխանութիւնները դարձի կը գան: Գագիկ Զհանգիրեանը յոյս չայտնեց, որ նախագահը վետո կը դնի օրէնքի վրայ: Իսկ եթէ այս օրէնքն այնուամենայնիւ մտնի օրինական ուժի մէջ, «թէ՛? այժմ, թէ՛? ապագայում ամէն ինչ անելու ենք դրա հակասահմանադրականութիւնն ի ցոյց դնելու համար: Բոլոր իրաւական լեզալ միջոցներով պայքարելու ենք»:

«ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔ ՏՈՒՈՂՆ ՈՒ ՎԵՐՑՆՈՂԸ ՆՈՅՆ՝ ՀՀԿ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԵՆ».- Հ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Ընտրակաշառք տուողն ու ընտրակաշառք վերցնողը նոյն ցուցակի 1 եւ 17 համարներն են, ասաց Քաղաքագէտների միութեան նախագահ Հմայեակ Յովհաննիսեանը՝ նկատի ունենալով Հայաստանի հանրապետական կուսակցութեան համամասնական ցուցակի առաջին տեղն զբաղեցրած Սերժ Սարգսեանին եւ 17-րդ տեղն զբաղեցրած Արտաշէս Գեղամեանին:

«2004 թուականը, երբ Սերժ Սարգսեանի կողմից դատարկ դժու անուանումն ստացած յայտնի գործիչն ասաց, որ 3 միլիոն դոլար է ստացել, սակայն Սերժ Սարգսեանն էլ յայտարարեց, որ 300 հազար դոլար է ընդամենը տուել նրան: Հիմա ստացուած է, որ այն մարդը, ով ասում է, որ գումար է տուել, եւ այն մարդն ով յայտարարել է, որ գումար է ստացել, նոյն կուսակցութեան համամասնական ցուցակում զբաղեցնում են առաջատար տեղերը: Ինչպէ՛ս պէտք է ընտրակաշառքներից գերծ մնանք նման դէպքում», - հարց տուեց Հմայեակ Յովհաննիսեանը:

Քաղաքագէտների միութեան նախագահ Հմայեակ Յովհաննիսեանը



Քաղաքագէտների միութեան նախագահ Հմայեակ Յովհաննիսեան

եանը լինելով անկուսակցական, ընտրութիւններին մասնակցելու է համամասնական ընտրակարգով եւ ընդգրկուած է «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան համամասնական ցուցակի առաջին տասնեակում:

Յիշեցնենք, որ Մայիսի 6-ին Հայաստանում տեղի կունենան խորհրդարանական ընտրութիւններ: Ընտրութիւնների քարոզարշաւը պաշտօնապէս կը մեկնարկի ապրիլի 8-ից: Ընտրութիւններին մասնակցելու յայտ են ներկայացրել 100-ից աւելի անհատներ եւ 9 կուսակցութիւն:

տուեալները, ըստ որի, ընտրութիւններին մասնակցելու պատրաստ մարդկանց 60%-ից միայն 40-ն է արդէն որոշել, թէ ում է ընտրելու: «Քսանը տատանում է: Այդ 40%-ի շուրջ 40%-ը հանրապետականներին է պատրաստուած իր ձայնը տալ, 35%-ը՝ ԲՀԿ-ին, 8-9%-ը ՀԱԿ-ն է, ՀՅԴ՝ 6-7%, ՕԵԿ-ն ու ժառանգութիւնը 5-6%», - ասաց նա:

massispost.com daily news updates





# ԼՈՒՐԵՐ

## «ԱՂԻԲԵԶԱՆՑԻՆԵՐԻ ՅՈՅՍՆ ԻՐԵՆՑ ԲԱՆԱԿՆ Է, ԻՍԿ ԱՅՆ ԳՆԱԼՈՎ ԹՈՒԼԱՆՈՒՄ Է»

Աղբբեջանցի վերլուծաբան Ասիֆ Գուլիբեկը «Ղարաբաղյան ուժ է պետք» վերաբերյալ խոսելիս նշում է, որ «Ղարաբաղյան ուժը»-ն ունի ներկայացուցչություն, որտեղ դիտարկում է ղարաբաղեան հարցի երեք հաւանական լուծում՝ հայերը պետք է հասկանան իրենց «սխալը» ու թողնեն այդ հողերը, երկրորդ՝ ուժային կենտրոնները պետք է ձնչում գործադրեն հայերի վրայ, երրորդ՝ Աղբբեջանը պետք է ուժով հետ վերադարձնի այդ տարածքները:

Նա նշում է, որ պատրանք կայ, թէ միջազգային ուժային կենտրոնները շարունակում են կշտամբել, կշտամբում եւ կշտամբելու են Հայաստանին «նուաճումներ կատարելու համար»: Միջազգային յարաբերութիւններում կշտամբելն իրականում «թող փչել է» այն կողմի աչքերին, ով ցանկանում է լսել այդ կշտամբանքը, տուեալ դէպքում խօսքը Աղբբեջանի մասին է: «Մեր աչքի առջեւ բազմաթիւ վարագոյրներ են կախում, որոնցից աղբբեջանական դիւանագիտութիւնը շնորհիւ է մնում», - գրում է Գուլիբեկը:

Անդրադառնալով այն հանգամանքին, թէ որքանով է հաւանական, որ հայերը «կը հասկանան իրենց սխալը» եւ ինքնակամ կը հեռանան Ղարաբաղի տարածքից՝ հեղինակը նշում է, որ դա բարդ հարց է: «Ղարաբաղում պատերազմ է ընթացել: Պատերազմի այդ փուլում աղբբեջանցիները տանուլ են տուել: Կարելի է ասել, որ դժուար թէ նրանք ինքնակամ դուրս գան այդ տարածքներից: Ուստի յոյսը Աղբբեջանի Ձինուած ուժերն են, որոնց վրայ պետութիւնը միլիտարիզացրել է ծախսում», - գրում է նա:

Հեղինակը կարծում է, որ աղբբեջանական բանակի հզօրացման մասին առասպելներն իրականում այնքան էլ չեն համապատասխանում իրականութեանը: «Վերջին տարիներին, աւելի ստույգ 2007-ից յետոյ Աղբբեջանի ՁՈՒ-ում սպայ դառնալ ցանկանողների թիւը գնալով նուազում է: Բացի այդ, չի կատարուում նաեւ Գլխաւոր ռազմական դպրոցների ընդունելութեան ծրագիրը, իսկ դա խօսում է ոչ թէ բանակի հզօրացման, այլ հակառակ գործընթացի մասին: Ոչ ոք չի ուսումնասիրում դրա պատճառները», - եզրափակում է աղբբեջանցի վերլուծաբանը:

## Ս. ՍԱՐԳՍԵԱՆԸ ՈՒՂԵՐՁ Է ՅՂԵԼ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ԶԱՄԱՆԱԽԱԳԱՅ ԵՐԿՐՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ

Եւրոպայի անվտանգութեան եւ համագործակցութեան խորհրդաժողովի որոշմամբ սկիզբ դրուած՝ Լեռնային Ղարաբաղի համարտութեան խաղաղ կարգաւորման Մինսկի գործընթացի 20-ամեակի կապակցութեամբ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը շնորհաւորական ուղերձ է յղել ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահող երկրների ղեկավարներին՝ Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւին, ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբամային եւ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիին:

Հայաստանի նախագահի մամուլի գրասենեակի փոխանցմամբ՝ Սերժ Սարգսեանը երախտագիտութիւն է յայտնել Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան լուծման ուղղութեամբ անցած քսան տարիների ընթացքում համանախագահող երկրների եւ անձամբ այդ երկրների նախագահների կողմից ձեռնարկուած հետեւողական ջանքերի համար:

Ընդգծելով, որ թէեւ Մինսկի

գործընթացի գլխաւոր նպատակը՝ հիմնախնդրի կարգաւորումը, դեռեւս մնում է չիրագործուած, Հայաստանի նախագահը նշել է, որ, այդուհանդերձ, անհնարին է գերազանահատել այն վիթխարի աշխատանքը, որ անցած քսան տարիների ընթացքում իրականացուել է Մինսկի խմբի համանախագահութեան կողմից՝ կողմերի դիրքորոշումների մօտեցման, հիմնարար սկզբունքների մշակման, լարուածութեան լիցքաթափման եւ խաղաղութեան պահպանման համար:

Սերժ Սարգսեանը վստահեցրել է, որ Հայաստանը, մեծապէս շահագրգիռ լինելով հիմնախնդրի հանգուցալուծմամբ, շարունակելու է իր դրական եւ կառուցողական ներգրաւուածութիւնը Մինսկի խմբի շրջանակներում Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորման գործընթացում՝ ի նպաստ տարածաշրջանի կայունութեան եւ անվտանգութեան, ժողովուրդների լաւագոյն ապագայի:

## ՍԵՐՃ ՍԱՐԳՍԵԱՆ ՍԵՈՒԼԻ ՍԷՃ

Շարունակուած էջ 1-էն

տանգութեան եւ ռատիո-ակտիւ նիւթերի պահպանման եւ հսկման գործում:

Սերժ Սարգսեան անդրադարձած է նաեւ Հայկական հիւլէակայանի մասին Սէուլեան գազաթնաժողովին Ատրպէյճանի նախագահի ներկայացուցած ապատեղեկատուութեան: «Իսկ Ատրպէյճանի նախագահի՝ Հայկական աթոմակայանի մասին այստեղ հնչեցրած բացառապատեղեկատուութիւնը ինձ չի գարմացնում, որովհետեւ Հայաստանի մասին յերիւրանքներ տարածելը Ատրպէյճանում վաղուց արդէն դարձել է գործելաձ: Ընդ որում, ամենաբարձր ամպիոններից խեղուած են ներկայացուում ոչ միայն Հայաստանին եւ Լեռնային Ղարաբաղին վերաբերող ամէն ինչ, այլեւ միջազգային հանրութեան՝ մեր եւ ձեր կողմից ընդունուած փաստաթղթերը: Նոյնիսկ ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդի՝ Լեռնային Ղարաբաղի խնդրով յայտնի բանաձեւերն են խեղաթիւրում, մոռանալով, որ իրենք են սկսել

ռազմական գործողութիւններ, իրենք են հրաժարուել դադարեցնել դրանք, իրենք են, որ հիմա ամէն օր ռազմատեսչ յայտարարութիւններ են անում եւ հրաժարուում Լեռնային Ղարաբաղի խնդիրը լուծել միջազգային իրաւունքի հիման վրայ», - նշած է նախագահ Սարգսեան:

Հանրապետութեան ղեկավարին խօսքով, Չեռնոպիլի եւ Ֆուլտսիմայի ողբերգութիւններէն ետք, շատեր վերապահումներով կը մօտենան միջուկային ուժանիւթի ապագայի խնդիրներուն: Որոշ յատուկ դէպքերու, ինչպէս Հայաստանի դէպքն է, ըստ նախագահ Սարգսեանի, քիչ այլընտրանք կայ՝ ապահովելու համար մեր ժողովուրդի կայուն գարգացումը ու կենսամակարդակի բարելաւումը:

Հանրապետութեան ղեկավարը ելոյթի աւարտին վերահաստատած է Հայաստանի հաւատարմութիւնը միջուկային նիւթերու անօրինական շրջանառութեան դէմ պայքարին, ինչպէս նաեւ վճռականութիւնը՝ աջակցելու ահաբեկչութեան դէմ պայքարի միջազգային ջանքերուն:

## ԸՆՏՐՈՂՆԵՐՈՒ ԹԻՒԸ ԱԻԵԼԱՅԱԾ Է

Շարունակուած էջ 1-էն

վրայ նշուած է Լուսինէ անունը՝ տարբեր ազգանուններով, հայրանուններով եւ ծննդեան թիւերով:

«Դա համակարգչային սխալ էր, որը մենք շատ արագ շտկեցինք եւ փակցրեցինք արդէն շտկուած տարբերակը» - ըսած է Անձնագրայինի պետը:

Անդրադառնալով Հայաստանէն բացակայող կամ մահացած մարդոց՝ ցուցակներու վրայ յայտնուելու հարցին, Քոչարեան ըսած է. - «Միակ հնարաւոր տարբերակը հաշուառումից դուրս եկող անձանց կողմից այդ մասին մեզ ժամանակին գրաւոր տեղեկացնելն է: Բա-

ւական է քաղաքացին թերանայ, չկատարի իր պարտականութիւնը եւ բնակչութեան պետական ռեգիստրը այդ մասով արդէն կ'ունենայ անճշտութիւններ: Ի դէպ, յանգուցեալների հարազատները չեն դիմում Քաղաքացիական կացութեան ակտերի գրանցման մարմիններ եւ մահուան փաստը չեն գրանցում»:

Այն պնդումներուն, թէ մահացած մարդիկ կը քուէարկեն, Քոչարեան պատասխանած է. - «Ես քուէարկելու մասին տուեալներ չունեմ, մենք քուէարկութիւնը վերահսկող մարմին չենք, ընտրական իրաւունքի սուբեկտները միայն ուստի կանութիւնը չէ»:

## ԴԻՏՈՐԴՆԵՐԸ ՕՐԵՆՔՈՎ ՊԵՏՔ Է ԱՊԱՅՈՎՈՒԹՈՒ ԸԼԼԱՆ ԶԵՏԱՊՆԴՈՒՄՆԵՐԷ

Հէլսինքեան քաղաքացիական ասամպլէայի վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունց համակարծիք է «Ընտրութիւնը քուկդ է» դիտորդական առաքելութեան մտահոգութեան, դիտորդները այս ընտրութիւններուն ապահովուած չեն ըլլար հետապնդումներէն:

«Ամէն ինչ հնարաւոր է՝ սկսած անկէ, որ դիտորդը իր արտայայտած կարծիքին համար կրնայ ենթարկուիլ հետապնդումների, մինչեւ գրպարտութեան մէջ մեղադրուելը», - ըսաւ ՀՔԱ վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունց:

Յիշեցնենք, որ Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովը (ԿԸՅ) իր արտահերթ նիստին մերժեց «Ընտրութիւնը քուկդ է» դիտորդական կազմակերպութեան՝ Մարտ 22-ին ներկայացուցած դիմումը, որով մտահոգութիւն կը յայտնուէր, որ նոր Ընտրական օրէնսգիրքին մէջ կը բացակայի դիտորդներու՝ ընտրութիւններուն ընթացքի եւ ամփոփման վերաբերեալ կարծիք յայտնելու համար դիտորդին պատասխանատուութեան չենթարկելու օրէնսդրական դրոյթը: Դիտորդական կազմակերպութիւնը կ'առաջարկէր Կեդրոնական ընտրական յանձնաժողովին, որ վերջինս ինք սահմանէ նոր իրաւական կանոն եւ անով լրացնէ Ընտրական օրէնսգիրքը:

Նշենք, որ այս կանոնը մշտապէս առկայ եղած է 1999 թուականէն ի վեր եւ լուրջ լծակ եղած է՝ -

դիտորդներու իրաւունքները պաշտպանելու, անոնց ճնշումներէն, անհարկի հետապնդումներէն եւ դատական պատասխանատուութենէն զերծ պահելու համար:

Հայաստանի առաջին օմպուտսմեն Լարիսա Ալավերտեան եւս համակարծիք է Սաքունցի եւ «Ընտրութիւնը քուկդ է» հասարակական կազմակերպութեան մտահոգութեան:

Լարիսա Ալավերտեան կ'առաջնորդուի այն կանխավարկածով, որ անկախ անկէ՝ հայաստանեան գործունէութեան մէջ նման դէպքեր եղած են, կա՞ն, թէ՛ կ'ըլլան, նման իրաւական օրէնքներ պետք է ամրագրուած ըլլան:

«Միաւորուած ազգերի կազմակերպութեան համաձայնագիրներից մէկով առաջին հերթին պաշտպանութեան կարիք ունեն մարդու իրաւունքների պաշտպանները: Իսկ դիտորդներն ընտրական իրաւունքի պաշտպաններ են», - ըսաւ Լարիսա Ալավերտեան:

Յիշեցնենք, որ ԿԸՅ-ն հիմնաւորած էր իր մերժումը՝ յղում ընելով Սահմանադրութեան 5-րդ յօդուածին, որուն համաձայն՝ «պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները եւ պաշտօնատար անձիք իրաւասու են կատարելու միայն այնպիսի գործողութիւններ, որոնց համար լրագորուած են Սահմանադրութեամբ կամ օրէնքներով»:

Այլ կերպով՝ ԿԸՅ-ը պատասխանեց, որ այդ Ազգային ժողովի գործառույթն է:

**Ձեր Ծանուցումները Վստահեցե՛ք «Մասիս» Շաբաթաթերթին**

**T: (626) 797-7680**

**F: (626) 797-6863 massis2@earthlink.net**



# ԱՄԵՆ ՕՐ ՔՈՉԱՐԵԱՆԸ ԴԱՌՆՈՒՄ Է ԱԻԵԼԻ ՆԱԽԿԻՆ

## Հայաստանի ներքաղաքական զարգացումներուն շուրջ հարցազրոյց՝ Տարածաշրջանային հետազոտութիւններու կենտրոնի տնօրէն Ռիչըրտ Կիրակոսեանի հետ

«Պարոն Կիրակոսեան, ներքաղաքական ներկայիս իրավիճակը նախընտրական գործընթացների ֆոնին ինչպե՞ս կը գնահատէք:

«Ընդհանուր առմամբ, Հայաստանին սպասուում են ոչ միայն շատ կարեւոր փորձութիւններ եւ մարտահրաւէր, այլ նաեւ հնարաւորութիւն: Այլ կերպ ասած, մայիսեան ընտրութիւնները շատ աւելի կարեւոր են, քան նախկինում եղած բոլոր ընտրութիւնները՝ պայմանաւորուած երեք հանգամանքներով. առաջին՝ սա առաջին ընտրութիւնն է 2008-ի Մարտի 1-ից յետոյ: Այս ընտրութիւնները պէտք է լինեն շատ աւելի բարձր մակարդակի վրայ, քան նախկին ընտրութիւնները, քանի որ այս ընտրութիւնների հետ կապուած Հայաստանի թէ ներսում, թէ դրսում բարձրացուած ակնկալիքներ կան: Բացի այդ, սա նաեւ վարչապետի եւ նախագահի անձնական խոստումների փորձութիւն է: Բայց երրորդ պատճառն ամենահետաքրքիրն է. այս ընտրութիւններում նորոյթն այն է, որ Հայաստանի քաղաքական պատմութեան մէջ առաջին անգամ կոնֆլիկտը ոչ թէ իշխանութեան եւ ընդդիմութեան մէջ է, այլ հենց ղեկավարող էլիտայի՝ ՀՀԿ եւ ԲՀԿ-ի: Այս ներքին կոնֆլիկտը լաւ է այն իմաստով, որ այն կարող է ստիպել բացել փակ քաղաքական համակարգը:

«Յարգելի ձե՛ք, որ ներքին կոնֆլիկտը խաղ է, եւ մեծ հաշուով նրանք չունեն տարածայնութիւններ:

«Ոչ, սա իրական կոնֆլիկտ է: Եթէ աւելի պարզ դիտարկենք, Հայաստանում քաղաքականութիւնը վերաբերում է երեք մարդու՝ առաջին, նախկին եւ ներկայիս նախագահներին: Այս կոնֆլիկտի մէջ կարեւորն այն է, թէ ինչպէս Սերժ Սարգսեանը եկաւ Քոչարեանից յետոյ, այլ այն, որ այսօր կայ իրական հակամարտութիւն: Ամէն անցնող օրուայ հետ Ռոբերտ Քոչարեանը դառնում է աւելի նախկին նախագահ, իսկ Սերժ Սարգսեանն աւելի ներկայիս նախագահ: Եւ այդ հակամարտութիւնն առաւել քան իրական է:

«Իսկ ո՞ր մնաց առաջին նախագահը:

«Եթէ չիշուծ էք նա մտաւերկիտութեան մէջ իշխանութեան հետ: Թւում է՝ նա պատրաստ է իր կուսակցութիւնը կամ դաշինքը բերել խորհրդարան: Սա լաւ է, քանի որ սա փակ համակարգը կը բացի, բայց ես մտահոգ եմ ընտրութիւնների հետ կապուած, որովհետեւ սրանք պէտք է լինեն աւելի լաւ ընտրութիւններ, իսկ եթէ գալիք նրանք նմանուեն նախորդներին, ապա մենք պէտք է վճարենք դրա համար: Հայաստանի բնակչութիւնը վատակել է լաւ ընտրութիւններ ունենալու իրաւունքը, եւ աշխարհը սպասում է լաւ ընտրութիւնների անցկացմանը:

«Ի՞նչ երաշխիքներ, որ իսկապէս լաւ ընտրութիւններ կը լինեն, մանաւանդ որ Հրապարակում քաղաքացիների ընտրութիւնները դարձնելու ընտրակաշառքով եւ ընտրակեղծիքներով էին:

«Սա ինձ լուրջ մտահոգութիւն առիթ է տալիս: Մենք չենք տեսնում այն երաշխիքը, որը մեզ կը համոզի,



որ այս ընտրութիւնները տարբեր են լինելու:

«Սակայն խօսուում է, որ սա այլևս այլ՝ քաղաքացիական հասարակութիւնն է 2008-ից յետոյ: Քաղաքացիական հասարակութիւնն ի՞նչ կարող է անել արդար ընտրութիւնների անցկացման համար:

«Այո, այլևս անհնար է վերադառնալ Մարտի 1-ին նախորդող շրջանին: Բայց ես չէի դնի այս մարտահրաւէրը քաղաքացիական հասարակութեան վրայ: Այս մարտահրաւէրը պատկանում է իշխանութիւններին, ոչ թէ քաղաքացիական հասարակութեանը: Այս կոնտեքստում սա նոյնիսկ քաղաքացիական հասարակութեան խնդիրը չէ, սա վերաբերում է անհատ անձանց՝ Հայաստանի քաղաքացիներին, ովքեր այլևս չեն կարող դիմանալ:

«Ինչո՞ւ քաղաքացիական նախաձեռնութիւնները չպետք է վերցնեն իրենց վրայ քաղաքականութիւնը, քաղաքականապէս հանդէս չգան:

«Մարտի 1-ից յետոյ քաղաքացիական հասարակութիւնը շատ խելօք գտնուեց, Հայաստանի բնակչութիւնը քուն չմտաւ եւ հետ չվերադարձաւ յուսալքութեանը, այլ բարձրացրեց աւելի չէզոք խնդիրներ, այդ թւում՝ բնապահպանական, քաղաքաշինական՝ խուսափելով ուղղակի հակամարտութիւնից, ինչպէս նաեւ ընդլայնելով ներքեւից եկող ճնշումն իշխանութիւնների վրայ: Ես աջակցում եմ այս բոլոր քաղաքացիական շարժումներին, բայց հաւասարակչութեան, կայունութեան առումով այստեղ պայթիւնավտանգ խնդիր կարող է դառնան բանակում գոհերը, եւ եթէ կառավարութիւնը չկարողանայ լուծել այդ խնդիրը, ապա այն սպառնում է պայթել, որովհետեւ Հայաստանի բանակը Հայաստանում ապրող բոլոր մարդկանց բանակն է: Եւ սա միակ խնդիրն է, որը միաւորում է ազգայնականներին լիբերալների հետ, եւ սա միակ խնդիրն է, որը կարող է մոբիլիզացնել սփիւռքը: Եւ եթէ կառավարութիւնը չկարողանայ լուծել այս խնդիրը, սա կարող է դառնալ պայթուցիկ խնդիր եւ մեծ վտանգ պարունակել:

«Սակայն ՊՆ վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ նախորդ տարուայ համեմատ քչացել է զոհուած զինուորների թիւը, պաշտօնեաներն ասում են, որ սա աւելի վատ բանակ չէ քան, օրինակ, տասը տարի առաջ:

«Եթէ հետեւենք վիճակագրութեանը, ապա, այո, բանակում հիմա աւելի քիչ են ղեպքերը, քան

նախկինում, բայց երկու կարեւոր տարբերութիւններ կայ: Չափորոշիչները եւ սպասումները բանակի հարցում շատ աւելի մեծ են: Սա կապուած է պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանի բարեփոխումների հետ, որ մենք կարողանում ենք տեսնել բանակում: Մենք պակաս հանդուրժող ենք դարձել բանակում գոհերին, եւ մարդիկ, ովքեր բարձրացնում են այս խնդիրը, հայրենասէրներ են, ոչ թէ դաւաճաններ կամ գրանտակերներ: Սա արտասահմանից ֆինանսաւորող դաւադրութիւն չէ, այլ մի հարց, որը դառնում է իւրաքանչիւր ընտանիքի խնդիրը: Եւ եթէ մենք նայում ենք Հայաստանի կառավարութեանը կամ ոստիկանութեանը, ապա նրանք շատ աւելի մեծ գրանտներ են ուտում, քան քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչները:

«Ինչպե՞ս էք պատկերացում այս հարցում նաեւ սփիւռքի աջակցութիւնը եւ համայնքները:

«Բարեբախտաբար հենց ինքը՝ Օհանեանն այն մարդկանցից է, որ բացառապէս է այս խնդիրները: Նրա մօտ բարեփոխումների եւ փոփոխութիւնների անկեղծ ձգտում կայ: Ինչ վերաբերում է սփիւռքի հետ կապի խնդրին, ապա սա նաեւ նրանց շահերից է բխում, քանի որ անդրադառնում է նաեւ Ադրբեյջանից եկող անմիջական վտանգին: Սա միակ խնդիրն է, որը միաւորում է Հայաստանի բնակչութեան բոլոր խաւերին եւ բոլոր անհատներին:

«ՀՀԿ-ԲՀԿ կոնֆլիկտը նախընտրական պրոցեսներում աւելի կը խորանայ, բայց ո՞ր կը լինի:

«Իհարկէ, կոնֆլիկտը դեռ շարունակում է աւելի մեծանալ եւ աւելի լրջանալ, եւ հնարաւոր է լուրջ բախում, որովհետեւ իւրաքանչիւր բախում լուրջ է, եւ նոյնիսկ քաղաքացիների ընտրութիւնների ընթացքում մենք տեսանք բախումներ ՀՀԿ եւ ԲՀԿ երիտասարդական թեւերի մէջ: Մենք, այնուամենայնիւ, այլ ստիպի բախումների կարիք ունենք, մեզ աւելի շատ պէտք է, որ կառավարութիւնը մարտահրաւէր նետի եւ լուծի օլիգարխների հարցը:

«Ինձ մտահոգում է, որ այս օլիգարխներից շատերը դրել են իրենց թեկնածութիւնը մեծամասնական ընտրակարգով խորհրդարան մտնելու համար: Սա այն քայլն է, որ աւելի վատացնում է եւ ոչ թէ լաւացնում վիճակը: Նրանց պէտք է հետ պահել քաղաքականութիւն մտնելուց: Բիզնեսի եւ իշխանութեան միաձուլումը Հայաստանի քաղաքականութեան քաղցկեղն է:

«Գործարար Սամուէլ Ալեքսանեան ասում է, որ ինքը օլիգարխ չէ եւ որ կինն է տուել, օրինակ, իր թքի վիրահատութեան գումարը:

«Հայաստանի հասարակութիւնը երբեք չի մար չի եղել, բայց այս առումով Հայաստանի հասարակութիւնը շատ հանդուրժող է: Ընդհանուր առմամբ, մենք բաւարար հանդուրժողականութիւն չունենք հասարակութեան մէջ, բայց այս առումով օլիգարխներին շատ բան է ներուում, եւ նրանց նկատմամբ շատ հանդուրժողական ենք: Նրանց պէտք է հաշուետու դարձնել, հարկատուութեան, օրինական բիզնեսի առումով: Նրանց մենաշնորհ կարեւորագոյն ապրանքների ներմուծման հարցում տնտեսութիւնը պահում է փակուած:

«Ի՞նչ էք կարծում, Ազատութեան իրապարակում կեղծուած ընտրութիւնների դէպքում հանրութիւնը կը հաւաքուի՞:

«Կասկածներ կան, որ դրանք չեն լինի կեղծիքներով, եւ աւելի լաւ է, որ չլինեն կեղծուած:

«Իսկ եթէ, այնուամենայնիւ, կեղծուե՞ն...

«Այդ ժամանակ իշխանութիւնները շատ լուրջ գին կ'ունենան վճարելու: Այսքան երկար այս համակարգը չի կարող մնալ, չի կարող գործել, ինչպէս նախկինում էր, քանի որ օլիգարխներից եկող վտանգը շատ աւելի մեծացել է, եւ սպասումները շատ աւելի բարձր են: Անձամբ վարչապետը եւ նախագահն են խոստացել, որ ընտրութիւնները շատ լաւ են անցնելու, եւ սրանք կոնկրետ խոստումներ են ՀՀ բնակչութեան համար:

ՍԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ  
«ԼՐԱԳԻՐ»

## ՕՊԱՍԱ ԵՒ ԷՐՏՈՂԱՆ

Շարունակուած էջ 1-էն

Եւ Ատրպէյճանի միջեւ եղած խնդիրները: Եւ քանի որ այս հարցը փակուելի մտած է, խորհուրդ տուի, որ մենք խօսինք ատրպէյճանցիներու հետ, իսկ Միւսկի խումբի երկիրները՝ Ֆրանսա, Ռուսաստան եւ ԱՄՆ, փորձեն համոզել Հայաստանը, որ այս խնդիրը լուծենք»,- լրագրողներու հետ հանդիպման ընթացքին ըսած է էրտողան:

Ըստ թրքական «Սապահ» օրաթերթին, էրտողան Օպամային ներկայացուցած է իրենց դժգոհութիւնը Ծերակոյտին մէջ Հայոց

Յեղասպանութեան վերաբերեալ նոր բանաձեւին մասին:

«Օպամային ըսած եմ, որ մենք յոգնած ենք: Ամէն Ապրիլին նոյն խնդիրը կը յառաջանայ, հանրապետականները կու գան՝ նոյն հարցն է, դեմոկրատները կու գան՝ նոյն հարցն է: Ես ցոյց տուի նաեւ մեր կատարած քայլերը, ինչպէս Ախթամարի եկեղեցու օրինակը», - ըսած է էրտողան:

Թուրքիոյ վարչապետը Օպամային կողմէ ուղղած է ծերակուտականները, խորհրդարանականներն ու քաղաքական գործիչները «պատմաբաններու տեղ չդնել»:

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065

**Dr. Missak Ekmekdjian**  
Chiropractor

**Dr. Anahid Ekmekdjian**  
Chiropractor

Մեծածախանային եւ մանուկներու Բարբաթիոյ թափում:  
Գլխացաւ, վզի, մէջքի, յօդադէմ եւ մկանային ցտեղի:  
Իր քննարկի վարձի հետեւեալով պատահած վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է



# ԻՆՉ Է ԱՆԵԼՈՒ ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆԸ ԲՅԿ-ՈՒՄ

## ԱՐԱՄ ԵՆԳԻԲԱՐԵԱՆ

ՀՀ նախկին արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանեանի անդամակցումը ԲՀԿ-ին շարունակում է մնալ հայաստանեան քաղաքական դաշտի ամենաքննարկուող թեմաներից մէկը:

Սակայն, ցայսօր չի հնչել համապարփակ մի տեսակէտ, թէ ինչու՞վ է զբաղուելու ամերիկեան կրթութիւն ստացած եւ պատկանելի դիւանագիտական ուղղի ունեցող սիւլուքահայ գործիչը մի կուսակցութիւնում, որտեղ որոշումները (գոնէ տեսանելի մակարդակում) միանձնեալ ընդունում է թէ՛ կրթութեամբ, եւ թէ՛ պետական ու քաղաքական համակարգում իր անցած ճանապարհով Վ. Օսկանեանին զիջող Գազիկ Մառուկեանը: Եւ եթէ սրան յաւելում ենք նաեւ այն հանգամանքը, որ ԲՀԿ-ի արժեքային համակարգը (խօսքը կարգախօսների եւ յայտարարութիւնների մասին չէ) եւ Վ. Օսկանեան կերպարը, ամենաքիչը, անհամատեղելի են, ապա ստացւում է, որ Վ. Օսկանեանը «գործողողուած է» ԲՀԿ: Մնում է հասկանալ, թէ ո՞վ է «գործողման հրամանը» ստորագրել եւ ինչու՞ համար:

Ի դէպ, ԲՀԿ 6-րդ համագումարին Վ. Օսկանեանի արտիստիկ ելոյթը կարող է յաջող նիւթ դառնալ [absurdopedia.org](http://absurdopedia.org) յայտնի կայքի հեղինակների համար: Վ. Օսկանեանի քննադատական ելոյթը աւելի շատ կը սազէր «Ժառանգութեանը» կամ «Ազատ դեմոկրատներին», բայց ոչ, երբեք, վերջին հինգ տարիներին իշխանական կողմից լիբրալ անդամ հանդիսացող եւ իշխանական կերակրատաշտից առիւծի փայ ունեցող ԲՀԿ-ին: Կասկածից վեր է, որ Վ. Օսկանեանի ելոյթը նախօրոք համաձայնեցուած էր Գ. Մառուկեանի հետ եւ այդ ելոյթի հիմնական ազդակները ուղղուած էին նախագահ Սերժ Սարգսեանին: Եւ այս քաղաքական արտաբերութիւնը շահառուն կարող է հանդիսանալ մէկ մարդ՝ Ռ. Քոչարեանը, ով այդպէս էլ չհամակերպուեց երիտասարդ թոշակառուի կազմիւնակին եւ ամէն հնարաւորը անում է ակտիւ քաղաքականութիւն վերադառնալու համար:

Կասկածից վեր է նաեւ, որ Վ. Օսկանեանի այս վարքագիծը շարունակական բնոյթ է կրելու, քանզի վերջինս այլ ճանապարհ չունի, քան «մաւրի խաղը» հասցնել մինչեւ վերջ: Ցանկութիւն չունենալով անդրադառնալ Վ. Օսկանեանի ելոյթի դրոյթներին, խօսենք նրա վարքագծի շարունակականութեան հաւանականութիւններից: Եւ այսպէս, արտաքին գործերի նախարար աշխատած տարիներին Վ. Օսկանեանը նոյն գործելաոճով էր առաջնորդւում՝ միջազգային ամբիոններից իրականութեան հետ կապ չունեցող, բայց զեղեցիկ անգլերէնով մտքեր էր յայտնում «կովկասեան վագրի» բազմաշարժար հեթաթաշարից (այլ երկրների դիւանագէտներին դնելով, բառիս ամենաբուն իմաստով, առուցիկ տեղ), սակայն արտաքին քաղաքականութեան մշակման, կամ գոնէ այդ գործընթացի վրայ խորհրդակցական ազդեցութիւն ունենալ չէր ցանկանում: Այդ դէպքում առաջ կը գար պատասխանատուութեան հարցը, որից Վ. Օսկանեանը մշտապէս խուսափել է:

Ռ. Քոչարեանի նախագահութեան 10 տարիների ընթացքում Հայաստանի արտաքին քաղաքականութեան նախաձեռնութիւնների բացակայութեան եւ «քոմիւնիստներ» անդեմութեան պատասխանատուն հենց Վ. Օսկանեանն է, ով այնքան ասելիք չունի, որ ԲՀԿ համագումարում արցախեան համակարտութեան կարգաւորման «նոր», բայց վաղուց գոյութիւն ունեցող եւ բազմիցս քննարկուած հայեցակարգ է առաջարկում՝ նորից շեշտը դնելով բառախաղի ու ամբիոնային պէտքերի վրայ:

Չմոռանանք նաեւ, որ Վ. Օսկանեանը ցայսօր համարում է Ռ. Քոչարեանի ամենավստահելի մարդկանցից մէկը եւ նրա կերպարը հայաստանեան ներքաղաքական կեանքում օգտագործելը կարող է վկայել նրա մասին, որ Ռ. Քոչարեանը քաղաքական պայքարի թատերաբեմ է հանում իր գլխաւոր եւ, թերեւս, վերջին «ծանր հրետանուն»:

Բնաւ պատահական չէր, որ 2008թ. Մարտի 1-ի իրադարձութիւնների ժամանակ Ռ. Քոչարեանի անունից Վ. Օսկանեանն էր լրատուամիջոցներին բացատրութիւններ տալիս ստեղծուած իրադրութեան մասին: Այդ ժամանակ անհասկանալի էր, թէ ինչու՞ էր ներքաղաքական կարեւորագոյն հարցերը պարզաբանում արտաքին գործերի նախարարը, այլ ոչ պատկան մարմինների ղեկավարները, չէ որ փողոցային պայքարը ոչ մի առնչութիւն չունի արտաքին քաղաքականութեան հետ: Սակայն, յետադարձ հայեացք նետելով ոչ վաղ անցեալի պատմութեանը, կարելի է ենթադրել, որ Ռ. Քոչարեանը այդ շրջանում անվերապահօրէն վստահում էր Վ. Օսկանեանին եւ այդ վերաբերմունքը շարունակուել է եւ շարունակուելու է:

Հաւանաբար, մենք ականատես ենք լինելու մի իրավիճակի, երբ ԲՀԿ նախընտրական ցուցակի երկրորդ հորիզոնականում իր տեղը գտած Վ. Օսկանեանը շարունակելու է հայաստանեան ներքաղաքական դաշտը օր առաջ ապակայունացման ձգտող եւ պղտոր ջրուկ ձուկ որսալու փորձեր անող Ռ. Քոչարեանի քաղաքական գիծը, միեւնոյն ժամանակ բոլոր տեսակի հարցերը համաձայնացնելով միայն եւ միայն Ռ. Քոչարեանի հետ: Այնպէս որ, Վ. Օսկանեանից միայն հանրապետականները չէ, որ պետք է գգուչանան, այլ նաեւ՝ ԲՀԿ վերնախաւն ու անձամբ Գ. Մառուկեանը: HayNews.am

In commemoration of the  
**97th ANNIVERSARY OF THE ARMENIAN GENOCIDE**  
 and organized by  
**Gaidz Youth Organization**

**ՀՍԿՈՒՄ/ՔԱՅԼԱՐՇԱԻ**  
**CANDLELIGHT VIGIL/WALK**  
**March to Remember**

**Monday, April 23, 2012**  
**Երկուշաբթի, Ապրիլ 23, 2012**

Walk from  
**Pasadena City Hall to**  
**St. Gregory Armenian Church for**  
**Requiem Service**

6:00 PM Gather/Parking at St. Gregory Armenian Church  
 2215 East Colorado Boulevard, Pasadena

7:00 PM Transportation to Pasadena City Hall from St. Gregory Armenian Church  
 provided by organizer (100 N. Garfield Avenue, Pasadena)

8:00 PM Walk (2.6 miles distance) begins

9:00 PM Requiem service (Hokehankisd) and program conclusion at  
 St. Gregory Armenian Church, Pasadena



### ԵՐԵՎԱՆԻ ՄԸ ՊՈԼՍԱՐԱՅ ՄԻՈՒԹԵՆԵՆ ՆԵՐՍ «ՊՈԼՍՈՅ ՑՈԼԱՑՈՒՄՆԵՐ»

### ՊՈԼՍԱՐԱՅ ԵՐԳՉՈՒՅԻ ՄԻՊԻԼ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԵՋ



Տեղույս Պոլսահայ Միութեան եզակի երեկոյթներէն մին «Պոլսոյ Յոլացումներ»-ու նուիրուած միջոցառումն էր, որ տեղի ունեցաւ Շաբաթ 24, Մարտ, 2012 Միութեան «Քիւրքճիւղողլու» սրահին մէջ:

Շուրջ 300 ներկաներուն մէջ կը նշմարուէին Լոս Անճելըսի մօտ Հայաստանի աւագ հիւպատոս տիար Գրիգոր Յովհաննիսեան, Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեան, ինչպէս նաեւ քոյր կազմակերպութեանց, հայ մամուլի ներկայացուցիչներ եւ Միութեան անդամներ:

Պոլսահայ Միութեան գործադիր վարչութեան ատենապետ Տօքթ. Արթօ Էրասն իրաչեան իր բացման խօսքին մէջ բարի գալուստ մաղթեց հրաւիրեալներուն, միաժամանակ իր անհուն ուրախութիւնը յայտնեց հանդիսականներու մեծաթիւ ներկայութեան համար:

Օրուան հանդիսավարները Նիգոլ Պէրքսանլար եւ Սեւակ Շիրվանեան, ողջունելէ ետք խոսուեցան բազմութիւնը ներկաներուն պարզեցին Պոլսահայ Միութեան առաջադրանքները որ է ինքնութեան պահպանում եւ սատարել նոր սերունդի հայապահպանման եւ հայ մշակոյթի տարածման վսեմ գործին:

Երեկոյի յայտագիրը ունէր երկու մաս՝ ֆիլմի ցուցադրութիւն եւ երգահանդէս կատարողութեամբ Միպիլի:

Ներկաները մեծ հետաքրքրութեամբ լսեցին ծանօթ բեմադրիչ Էրիք Նազարեանին իր «Պոլիս» ֆիլմի պատրաստութեան շարժառիթին եւ դիմակալած դժուարութեանց մասին: Արդարեւ, երի-

տասարդ ֆիլմարտադրիչի տարիներու փափաքն եղած է շարժապատկերի վերածուած տեսնել մեր դարաւոր հայ մշակոյթի կեդրոն Պոլիսը, որուն ընտրանին՝ գոհ գացած էր 1915ի ցեղասպանութեան: Ապա հանդիսականները դիտեցին «Պոլիս» կարճամեթրաժ ֆիլմը: Վաւերագրական բնոյթ կրող այս ժապաւէնին մէջ առկայ էր հայ արհեստաւորն ու մոռացութեան մատնուած մօտաւոր անցեալի պատմութիւն մը, որուն մոլթ էջերը ծանօթ են բոլորիս...:

Անակնկալ յայտնութիւն մը եղաւ ձեռնարկի գեղարուեստական յայտագրի աստղը՝ պոլսահայ երիտասարդ եւ շնորհալի երգչուհի Միպիլի Փէքթորոսողլուի ելոյթը: Արդարեւ, երիտասարդ հայուհին՝ հայ եւ թուրք արուեստասէր շրջանակներու մօտ ծանօթ անուն մը դարձաւ մասնաւորաբար թրքական հեռատեսիլէն հայերէն լեզուով իր ունեցած ելոյթներուն համար:

Միպիլի այդ գիշեր գեղեցկօրէն մեկնաբանեց աւելի քան տասը հայկական ժողովրդական երգեր, որոնց յօրինումներուն մեծ մասը կը պատկանէին Մաթակ Թոշիկեանին («Նամակ», «Իմ պանդուխտ հայեր», «Ծառաւ Սէրի» եւն): Երգերուն դաշնամուրով կ'ընկերակցէր պոլսահայ շնորհալի արուեստագէտ Պուրակ Պետիկեան:

Շատ սիրեցինք Միպիլի «Բարի Արագիլ» երգի մեկնաբանումն ու մասնաւորաբար Մաթակ Թոշիկեանի «Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ» հոյակապ կատարումը: Արդարեւ Յովհաննէս Շիրագի բառերով գրուած այս երգը մեծ

Շար.ք էջ 18

#### Գ. ՄՈԼՈՅԵԱՆ

Այս օրերուն Լոս Անճելըս կը գտնուի պոլսահայ շնորհալի երգչուհի Միպիլի Փէքթորոսողլուն: Երիտասարդ եւ համակրելի արուեստագիտուհի անունը լայն տարածում ստացաւ թրքական պաշտօնական հեռատեսիլի կայաններէն, իր ունեցած մայրենի



լեզուով ելոյթներով: Արդարեւ, ինք կը հանդիսանայ առաջին հայուհին որ հեռուստատեսութեամբ հայ երգը կը ծանօթացնէր թուրքերուն: Ասիկա բացառիկ երեւոյթ մըն էր թուրք հեռուստատեսութեան համար, որոնք ցարդ ոչ մէկ գաղափար ունէին հայ երգի եւ մեր հարուստ մշակոյթին մասին:

Երգչուհի Միպիլիի համբաւն ու ժողովրդականութիւնը իսկոյն վերելք արձանագրեց նաեւ Հայաստանի մէջ, մասնաւորաբար իր «Տեսնեմ Անին ու Նոր Մեռնեմ» հայրենասիրական հանրայայտ երգով, որուն յօրինողն է պոլսահայ երգահան Մաթակ Թոշիկեան (խօսք՝ Յովհաննէս Շիրագի): Նշենք նաեւ Միպիլի այս երգով հանդէս եկաւ 2011ին Երեւանի մէջ տեղի ունեցած համահայկական մարզական փառատօնի բացման արարողութեան ընթացքին:

Իսթանպուլ ծնած Միպիլի Փէքթորոսողլու սկսած է երգել Պոլսոյ Ֆէրիզիդի Սուրբ Վարդանանց եկեղեցւոյ երգչախումբին մէջ 1991 թուականէն սկսեալ: Պոլսահայ գեղարուեստական շրջանակներուն համար ան նորայայտ աստղի մը տպաւորութիւնը ձգեց, երբ 1999ին Տիրգան Չուհաճեանի «Լէպլէպիճի Հօր Հօր Աղա» երաժշտական թատերախաղին մէջ ելոյթ ունեցաւ:

մշակութային ժառանգութեան առարկաների մեծ հաւաքածուներ ունէին: Նրանցից մէկը Փոլ Բեդուկեանն էր: Մենք նրա հետ բանակցութիւններ սկսեցինք: Նա ցանկութիւն էր յայտնել իր հաւաքածուն մեզ նուիրաբերելու: Արդէն 80 տարեկան էր, ծեր էր: Երեք տարի շարունակուող բանակցութիւններից յետոյ նա ստորագրեց փաստաթղթերը՝ մեր թանգարանին նուիրաբերելով իր հաւաքածուն: Միւս անձնաւորութիւնը Ա. Գրիգորեանն էր: Նա այս շրջանի ամենայայտնի կարպետի առեւտրականն էր: Երբ շուրջ 200 հայկական կարպետների մի անգուզական հաւաքածու ունէր, մեծամասնութիւնը՝ հայկական գրքերի պատկերներով: Որոշ ջանքեր գործադրելուց յետոյ, քանի որ նա իր ժառանգութեան հետ շատ կապուած էր, նա նուիրաբերեց մեզ իր հաւաքածուն:

Վերջինը Գայիֆորնիացի մի իրաւաբանի կողմից նուիրաբերուած սալիկներ էին, որոնք նա գնել էր Լոնտոնում աճուրդի ժամանակ 500-600 հազար տոլարով: Նա փնտռում էր սալիկները նուիրաբերելու ամենայարմար վայրը ԱՄՆ-


ում: Մեր թանգարանը նա համարեց լաւագոյնը:

Ե՛հնքը գնելուց երկու տարի անց ի վիճակի եղանք ողջ վարկը մարել, ինչն այն ժամանակ կազմում էր 1,5 միլիոն տոլար: Այն ժամանակներից սկսած՝ մենք շատ յաջողակ ենք եղել, ընդլայնել ենք հաւաքածուների, ցուցանմուշների ցանկը:

Բաւականին դժուար է, քանի որ Ամերիկայում սիրում են պէյսպոլի, ֆուտպոլի խաղեր այցելել, եւ նրանք արուեստի, թանգարաններ գնալու հետ սէր չունեն, ինչպէս դա Հայաստանում էր, մինչեւ նրա «ամերիկացուելը»: Կարծում եմ՝ հասկանում էք ինչը ի նկատի ունեմ: Ես յիշում եմ՝ երբ հայկական պոէզիայի մի նոր գիրք էր տպագրուում, գրախանութի դիմաց երկար հերթեր էին գոյանում: Այժմ Հայաստանն այլեւս այդպիսին չէ:

Ինչեւէ, որպէս արդիւնք, մենք այժմ ունենք Հայաստանից դուրս գտնուող ցուցանմուշների ամենամեծ հաւաքածուն, եւ 30000 հատորներից բաղկացած մի գրադարան:

Շար.ը էջ 19



**ՈԳԵԿՈՉՈՒՄ  
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ  
97ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻ**

Կազմակերպութեամբ

**ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅՄՆՁՆԱԽՈՒՄԻ**

**Ελληνιστου` Φροφ. ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐԵԱՆ**

Նիւթ՝

**«ԻԹԹԻՀԱՏ ԵՒ ԹԵՐԱՔԷԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ  
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՁ»**

Չորեքշաբթի, Ապրիլ 4, 2012 երեկոյեան ժամը 7:00ին  
 Պոլսահայ Միութեան «Գրիգոր և Աւետ Բիւրքչիւօղլու» պահին սի.ք  
 19726 Sherman Way, Winnetka, CA 91306

Տեղեկութեանց համար հեռաձայնակ Տոթթ. Յովհաննէս Գ. Աւետիսեանին (818) 800-1976 (cell)  
 Մուտքը ազատ Հիւրասիրութիւն

Organized By

**THE CULTURAL COMMITTEE OF  
ORGANIZATION OF ISTANBUL ARMENIANS**

Lecture Night Commemorating  
**THE 97<sup>th</sup> ANNIVERSARY OF THE "ARMENIAN GENOCIDE"**

With


**PROF. VAHAKN DADRYAN**

Subject

**“İttihat and Terakki Party’s Role in the Armenian Genocide”**

Wednesday, April 4, 2012, at 7:00 p.m.  
**At OIA “Krikor & Aved Kurkcuoğlu Hall” 19726 Sherman Way Winnetka, CA 91306**

Free Admission Reception  
 For information, please call Dr. Ohannes K. Avedikyan at (818) 800-1976.





### ԶՈՒՅՑ ԶՈՒ ՅԵՏ

#### ԿԱՐԻՆԷ ՄՈՎՍԻՍԵԱՆ

Դու երբեք չգրուցե՞լ ես ջրի հետ, անկեղծ կիսուե՞լ քեզ տանջող ապրումների ու յոյզերի մասին: Գիտե՞ս, որ ջուրը լսում է, մերթ ալեկոծում է, փրփուր տալիս, մերթ էլ իր քչքչան հանդարտութեամբ պարզապես հոսում է: Իմ եւ քո նախնիները, որոնք իրար հարազատ են եղել, լեզուներ են հիւսել ջրի մասին: Զուրը սուրբ էր, յոյս էր նրանց համար: Քեզ անշուշտ ասել են նրանք. Դու պատմիր ցաւերդ ջրին, ջուրը կը տանի հեռուներ: Զուրն էլ ունի զգացմունք, զարմանալիորէն կլանում եւ իր խորքի մէջ սուզում է մարդկային աղաղակներն ու մեր զայուած ճիչերը: Հագարամեակներով կապուած են միմիանց հետ մարդը եւ ջուրը. Անբացատրելի, անբաժանելի կապով... Գիտե՞մ, որ դու էլ ինձ նման սիրում ես նստել ջրի ափին ու մանր քարեր նետել ալիքների մէջ: Թուում է՝ այն մի գուռաճալի, հաճելի զբաղմունք, կամ մանկական խաղ է, սակայն խաղ չէ սովորական... Դա հենց մարդու ամբողջ հոգեւոր աշխարհի սերտ կապի մի փոքրիկ դրսեւորումն է ջրի հետ: Խաղաղուում ես այդ շփումից, թուում է՝ չես էլ զգում կեանքի յորձանուտը, որը նման է հրաբխային խառնարանի: Ինձ մտովի այցելում է մեր պապերի կողմից մեզ փոխանցուած միւս իմաստութիւնը ջուրը կեանք է: Աշխարհը մեծ է, լայնատարած, բայց մեծութեան մէջ էլ ջուրը մաքրում է կեանքի բոլոր հետքերը, նորոգում է յոգնած նեարդերդ, երբ վայելում ես լոկ մէկ բաժակ սառը ջուր: Ջրով զովացնում, մաքրագործում ես մարմինդ... Ու քեզ կատարեալ հանգիստ ես զգում: Ջրի հետ սկսում ու աւարտում է քո մտերմիկ խոստովանութիւնը եւ ամէն ինչ այսպէս հոսելով գնում, հասնում է հեռու

աշխարհներ, որ դառնայ քաղցր անուրջ: Մարդ ուր էլ ընկնի, սկսում է ջուր փնտռել՝ գուցէ ոչ միայն մարմնի, այլեւ հոգու ծարաւը հագեցնելու համար: Ուրեմն իսկապէս, այն նոր յոյսի, նոր կեանքի սկիզբ է: Ճշմարիտ են ասել մեր պապերը, որ ջուրը կեանք է..

#### ԶՈՒՐԸ՝ ՀՈԳՈՒՍ ՄԷՋ

Սիրում եմ նստել գետի ափին ծուլօրէն ընկած ողորկ քարերին ու նայել նրա մեղմ հոսանքին: Նայում եմ ու զմայլում ջրի կապտականաչաւուն երանգներով, խաղաղ, անդորր ընթացքով: Շատ եմ ուզում գրկել ալիքները... ու փարուում եմ: Ջրի հետ մարմնիս շփումից հոգիս մի պահ սարսուում է. դա մեր մտերմութեան սկիզբն է: Յետոյ կարծես վերանում եմ այս աշխարհից ու ընկնում երանութեան գիրկը: Ուզում եմ վայելել ջրի ջինջ կապոյտ աղամանդափայլ ցոլանքը, զգալ նրա ջերմ հպումը... լսել նրա մեղեդին թովիչ... Ուրիշ որինչ չեմ մտաբերում, անջատում եմ, ինչպէս մատի թեթեւակի հպումով կարելի է անջատել էլեկտրական որեւէ սարք... Ու սկսում է իմ տարրալուծումը ջրի ցոլանքներին՝ հոգիս, սիրտս, յոյզերս, փոթորիկներս, ապրումներս... յետոյ ամէն ինչ լուում է. աշխարհն էլ է լուում: Զուրն ամէն ինչ կլանում է իր մէջ ու սուզում խորքերն անյատակ: Միայն ուզում եմ իմ սէրը թողնել այդ հմայիչ ջրերի մէջ, լսու՞մ ես՝ իմ մեծ ՍէրԸ: Թող հորձանք տայ ջուրը ու տանի այն հեռու-հեռուներ, բաժանի կարօտ մարդկանց ու դաշտերին պապակ: Գուցէ մի սքանչելի դաշտում այդ սիրուց մի հրաշք ծաղիկ կը բուսնի՝ ՍԻՐՈՅ ԾԱՂԻԿԸ: Խաղաղ են երկիրքը, ջուրը, խաղաղ է այդ պահին աշխարհը, ու այդ աշխարհի մէջ՝ ես եւ դու, իմ հեռաւոր ընկեր: Ամենուրէք միայն

ջրի մոգական ու վարակիչ հզոր ուժն է, որ փոխանցում է մեզ: Անէութեան հրաշալի պահեր, անասնոջան թեթեւութիւն, տիեզերքի խորհրդաւոր ձայներ, մարմնի խաղաղ վիճակ, անկրկնելի ներդաշնակութիւն, ցնորք, մտապատկեր եւ անուշներ, անուրջներ.....

#### ՍԵՒ ԿԱՏՈՒ

Այսօր այնպէս եմ ուզում զրուցել քեզ հետ, իմ քնքուշ, փափկամազիկ, իմ սեւ կատու, պարզապէս նայել եմ ուզում քո հիասքանչ պատկերին: Քեզ անուանելիս անպայման պէտք է շեշտել այդ չարաբաստիկ սեւ բառը, քանզի դու տարբերում ես նոյնիսկ մնացած բոլոր կատուներից, որոնք գոյութիւն ունեն շուրջբոլորը: Այդ բառը միշտ քեզ հետ է, ինչպէս կակաչի կարմիրը, երկնի կապոյտը, արեւի ոսկեգոյնը, ծառի սաղարթի կանաչը: Մի՞թէ դժուար է մարդկանց համար ընդունել մի պարզ միտք. սեւն էլ հենց քո գոյնն է: Չէ՞ որ լեռնային մանուշակը կապոյտ է լինում, ձիւնը՝ սպիտակ, իմ աչքերը՝ շագանակագոյն, մօտակաջ պուրակի մեկուսի նստարանին նստած երիտասարդի բաճկոնը՝ մոխրագոյն, իսկ դու... դու էլ այդպէս ես ծնուել, ուղղակի՝ սեւ ... Ինչո՞ւ է կեանքում ամէն ինչ այդպէս լինում... մարդիկ ինչ-որ բաներ սովորական են ընդունում, կարծես զարմանալի ոչինչ չկայ, բայց քո գոյնը... քո գոյնը խենթացնում է, եւ շատ կտրուկ զգացողութիւն է առաջացնում, շատերը նոյնիսկ իրենց կարծես ծակող ասեղներով վրայ են զգում, երբ դու կտրում ես նրանց առջեւով անցնող ճանապարհը: Ու ես գրեթէ համոզուած եմ, որ այդ ընդհանուր անհանգստութիւնն էլ անմիջապէս փոխանցում է քեզ, իմ սեւուկ սիրունիկ: Ես նկատել եմ մարդկանց ներկայութիւնից քո արագընթաց փախուստը... Մոլորուած նա-

յում ես շուրջդ ու փախչում այնքան արագ, այնքան աննկատ: Իմ խեղճ, մլաւկան փիսիկ, ուր ես փախչում, այս աշխարհից ախր ուր պէտք է գնաս... կարծես դու էլ մերժուած, լքուած մի մարդ լինես, որը դարձեալ ուզում է փախչել, բայց չգիտի, թէ ուր... Ես սիրում եմ քո հրաշագեղ աչուկները, կանաչաւուն, հրացոյք աչուկները՝ նման գոյգ հակինթներին....

-Մարդի՛կ, երբեք փորձե՞լ էք նայել այդ զարմանալի արարածի աչքերի բոցերին, զգացե՞լ էք, թէ ինչ ներդաշնակ են նրա սեւ փափուկ մորթու գոյնը եւ այդ հրագոյն աչքերը....

Պատասխան չկայ, բոլորը լուռ են, մարդիկ զարմանալի են.... գոնէ մէկ հիացական բացականչութիւն հնչեր...

-Սեւ կատուն գոյների իսկական համադրութիւն է, եզակի, աչքին անսովոր: Նա նման չէ միւս կատուներին, իսկ միգուցէ աւելի շատ է փաղաքշանքի ու մեղմ զգուանքների կարիք զգում, մարդիկ...- շարունակում եմ ես, բայց ինձ լսող չկայ, մարդիկ փակել են իրենց սրտերի դռները...

Իմ ձայնը լսելի է միայն ինձ եւ անկիւնում կուչ եկած իմ սեւ կատուին... որն իմ աչքերով հիասքանչ է,.... Դու երեւի չգիտես, որ մարդկանց աշխարհը բարդ է, իմ սեւամազիկ ընկեր: Գեղեցիկը է պէտք զգալ ու հասկանալ խորութեամբ:

Իսկ մարդկանց աշխարհում ընդունուած է գնահատել միայն այն ժամանակ, երբ արդէն շատ ուշ է լինում... Գեղեցիկն արժեւորելու համար միայն սովորական աչքերը քիչ են, հոգու խորաթափանց աչքեր են հարկաւոր: Ես հաւատում եմ, որ կը լինի վերաբերմունքի մեղմացում, կը փոխուեն մարդիկ, մտքերը նրանց...

-Դէ, ինձ մօտ արի՛, իմ քնքու՛շ աղուամազիկ, իմ մտերի՛մ, իմ անսովոր՛ Սեւ կատու:

**ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ**  
**ԱՅՆԹԱՊԻ ԼԵՐՈՍԱՄԱՐՏԻ 92-ՐԿ ՏԱՐԵԳԱՐՁԻՆ**

Նազմակցութեամբ՝  
**ԱՅՆԹԱՊԻՏԻՆԵՐՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ**

Հովանաւորութեամբ՝  
**ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՎԱՐՈՒԹԱՆ ԵՒ ՍԻԿԻՄ ԻՍԿԵՆՏԵՐԵԱՅԻ**

Փյաւոթ բաճախով՝  
**ՏԻՄԱՐ ՎԱՐՈՒԹԱՆ ԻՍԿԵՆՏԵՐԵԱՆ – ՍԻՏՆԻ**

---

**Գ Ե Ղ Ա Ր ՈՒ Ե Ս Տ Ա Կ Ա Ն Ժ Ո Ւ Յ Ա Յ Տ Ա Գ Ի Ր**

**Կիրակի, 22 Ապրիլ 2012, կէսօրէ ետք ժամը 5:00-ին**  
 Մայր Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցոյ  
 «Ռէյնջմա եւ Աճի Գոյումնեան» սրահին մէջ  
 1510 E. Mountain St., Glendale, CA 91207

**ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ** **ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ**

  
**ARMENIAN AINTABTZY CULTURAL ASSOCIATION**  
 Presents  
**THE 92<sup>ND</sup> ANNIVERSARY COMMEMORATION**  
**OF AINTAB HEROIC RESISTANCE**

Under the auspices of  
**MR. & MRS. VAROOJAN AND SYLVIA ISKENDERIAN – SYDNEY**

Keynote Speaker  
**MR. VAROOJAN ISKENDERIAN**

---

WITH A CULTURAL PROGRAM

**Sunday, April 22, 2012, at 5:00 p.m.**  
**St. Gregory Armenian Catholic Church – Kouyoumjian Hall**  
 1510 E. Mountain St., Glendale, CA 91207

REFRESHMENTS & RECEPTION ALL ARE WELCOME

Visit the Aintabtzay web page: [www.noraintab.org](http://www.noraintab.org)

**NEW ARMENIA THE ONLY ARMENIAN INDEPENDENT DAILY**

**Նոր Հայաստան**  
**ԱՄԵՆՈՒՆ ԾՐԱԳԵՐՈՒԸ**

**ՕՐԱԹԵՐԹԻ**  
**20-ամեակի տօնակատարութիւն**

Հովանաւորութեամբ՝  
**Արթի. Տէր ՄԻՔԱՅԷԼ ԵՊՍ. ՄՈՒՐԱՏԵԱՆԻ**  
 Առաջնորդ՝ **ԱՄՆ-ի եւ Գաճատայի Կաթողիկէ Հայոց**  
 Նախագահութեամբ՝  
**ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԼԵՐԻ ԵՒ ԱՐՇՈ ՏԻՐԱՄԱՐԵԱՆՆԵՐՈՒ**  
 Փյաւոթ բաճախօս՝  
**ՀԱՅՐ ԱՆՏԻՆ Ծ. ՎՐԿ. ԱՊԱՄԵԱՆ**

*Գեղարուեստական Յայրագիր Եւ Յայրուկ*  
*Մտնապառուրիւն 20 կնիստայրերով*

Հանգիստագործեր՝  
**ՍԱՐԳԻՍ ՄԱՃԱՌԵԱՆ ԵՒ ՕՅԵԼԻԱ ՀՈՎԵԱՆ**  
 Մասնակցութեամբ՝  
 Կիւնտլիի Հայ. Կար. եկեղեցոյ Այտրեան երգչախումբին  
 (Ղեկավար՝ Մաւսրօ Կրէկ Մարոյեան)  
 Վաստակաւոր բեմադրիչ-դերասան՝ Գրիգոր Մարաճեանի  
 Զուրակ՝ Բենիամին Գառապրեան  
 Աստուծո՛ր բաճախեղծութիւնի Օֆելիա Հովեան  
 Երգ՝ Ատիս Հարժմանեան  
 Նուագ՝ Հմայեակ Յովհաննիսեան

**Կիրակի, Ապրիլ 29, 2012, կ.ե. ժամը 4:00-ին**  
**ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԵՐՄԱՇՈՒՐ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ**  
**117 South Louise, Glendale**  
**ՄԻՐՈՎ ՀՐԱԻՐՈՒՄԸ Է ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԻՔ**  
 Հանգիստութեան աւարտին մոտ հետապիտութիւն

Մտաքնն՝ ազատ  
 Յանդէպ՝ մանրամասնութեանց համար հետաձայնել

**(818) 246-6468**



# ՆՈՐՈՎ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՎ ԵՒ ՀԱՒԱՏՈՎ... ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒԵՑ ՀԱՂԱՐԾՆԻ ՎԱՆԱՅԱՍԱԿԻՐԸ

## ԱՐՄԻՆԷՄԵԼԻՔ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

Պատմական յուշարձաններ. տուրիզմի զարգացմանը նպաստող արժեքներ լինելուց գատ այս հոգեւոր կառույցները հայ քրիստոնեայի մշտանորոգ հաւատի խորհրդանիշներն ու կենդանի վկաներն են, որոնք արժանի ուշադրութեան կարիք ունեն այսօր... Խոնարհուած, կիսաւեր վանքեր ու մատուռներ, ուր ժամանակին հնչել են պատարագ ու շարական՝ լեռնագագաթների վրայ կղզիացած դառնում են բնութեան մասնիկները, ծածկուած ծառերով ու բուսականութեամբ... Իսկ աղօթքները միշտ կենդանի են... Ու երեւի երկնային կամքի շնորհիւ էր նաեւ, որ Հայաստանի հրաշալի եկեղեցական կառույցներից մէկը՝ Հաղարծինի վանահամալիրը հիմնովին վերանորոգուեց ու համալրուեց նաեւ կից հիւրատանով, դիլիջանեան գողտրիկ այս վայրը դարձնելով այցելուների համար աշխարհիկից կտրուելու եւ բնութեանը մերձենալու հրաշալի անկիւն, ուր մի քանի ժամերի ընթացքում կարող ես առնչուել բնութեան բոլոր երեւոյթներին միանգամից... Վանահամալիրում այցելուների ու զբօսաշրջիկների հոծ խմբերի կարելի էր հանդիպել անգամ վերանորոգման ընթացքում:

- Եկեղեցին մնաց գործող, նրա դռները միշտ բաց են ուխտաւորների ու այցելուների համար, - ասում է Հրայր քահանայ Բեջանեանը, ով սպասարկում է Նոյեմբերեանի տարածաշրջանն ու ժամանակաւոր նաեւ Հաղարծինի վանահամալիրը, եւ սիրով պատասխանեց մեր հարցերին:

- Ո՞ր թուականից է սկսուել վերանորոգումը...

- Արդէն հինգերորդ տարին է ինչ Արաբական էմիրաթներից Շարժայի շէյխը յանձն առաւ վերանորոգումը եւ գումար տրամադրեց:

- Կրօնական երկխօսութեան իմաստ ունի՞ ցման քայլը:

- Կարելի է այդպէս ասել, բայց ոչ մի քաղաքականութիւն չկայ դրա տակ թաքնուած, սա բարի կամքի դրսեւորում է: Մեր ժողովրդի մշակոյթին, պատմական արժեքների հանդէպ ունեցած սէրն ու յարգանքը մղեցին այդ մարդուն նման վերաբերմունք դրսեւորել: Աւելի խորը ծանօթանալով Հայաստանի պատմութեան հետ ցանկացաւ նման քայլ անել:

- Հայր Սուրբ, արդեօք Ամենայն Հայոց Կաթողիկոսը նպաստե՞լ է այս ամէնին եւ որքանո՞վ է զգալի էջմիածնի մասնակցութիւնը այս ամէնին...

- Վեհափառ Հայրապետը ոչ միայն նպաստել է, այլ նրա բարձր տնօրինութեան, կարգադրութեան եւ հովանու տակ է միշտ եղել Հաղարծինի վանքը, հիմա առաւել

եւս, երբ սկսել են վերանորոգման աշխատանքները: Բացի Շարժայի շէյխի ներդրած գումարները վեհափառ Հայրապետը բաւականին գումար ներդրեց վանական միաբանական շէնք կառուցելու համար:

- Ինչպէս տեսնում ենք Հաղարծին վանահամալիրը կարծես թէ նոր կառոյցներով է համալրուում...

- Հայաստանում գտնուող եզակի կառույցներից կայ այստեղ... Նոր կառույցներ չեն աւելանում, այլ վերանորոգուած են: Այստեղ թագաւորական գերեզմանատուն կար, որի վրայ կառուցուել էր մատուռ, որը աւերուել էր, եւ հիմա այն վերականգնուած է: Վանական համալիրի մէջ ոչինչ չի աւելացել:

- Հայաստանում կան եկեղեցիներ, որոնք կորցնում են պատմական գրաւչութիւնը վերանորոգելուց յետոյ կատարուած շինարարական աշխատանքներում տեղ գտած նորանորոգումների շնորհիւ: Արդեօ՞ք ուշադրութիւն դարձուել է, որ այս համալիր կառոյցի վերանորոգման մէջ պահպանուել է պատմական շունչը:

- Հին հիմքերի վրայ են յենուում վերանորոգողները, պատի վրայ կան հին քարերի մնացորդները, որոնց նմանութեամբ եւ կրկնօրինակմամբ կատարուած են աշխատանքները: Վանական համալիրում պահպանուած են հայ հին բոլոր ճարտարապետական ոճերը եւ այստեղ ոչինչ չի աւելացել, պարզապէս մենք փորձում ենք վերականգնել կառուցը: Քարը տրաւերտին քարն է, որով ի սկզբանէ կառուցուած է եղել տրաւերտինով, կան պատերի մէջտեղներում քարեր, որ բազալտէ քարեր են, բայց վերանորոգումը կատարուել է հիմնական տրաւերտինով: Սեղանատունը նոյնպէս վերանորոգուած է եւ նախկինում, ինչպէս որ մեր նախնիներն են պատրաստել կոճղերով աթոռներն ու փայտէ սեղանը, այդպէս էլ մենք նորոգումից յետոյ պիտի նոյնը դնենք իր տեղում:

- Մենա՞կ էք ծառայում այս վանահամալիրում, Տէր Հայր: Պատարագներ այժմ էլ են մատուցու՞մ, անկախ վերանորոգման աշխատանքներից: Մի՞շտ է այպէս մարդաշատ:

- Ինձ հետ միասին Հայր Արիստակէսն է այստեղ, որ վերադարձել է Գերմանիայից: Վերանորոգման աշխատանքները չեն խանգարել ծիսակատարութիւններին: Այո: Մկրտութիւններ, պսակադրութիւններ միշտ եղել են ու լինում են Հաղարծինի վանքում: Վանքը վերաբացուեց 1990 թվականին, Գուգարաց թեմը հիմնեց Արսէն Արքեպիսկոպոս Բերբերեանը, վերաբացեց այդ թեմը եւ Հաղարծինը իբրեւ նստավայր էր համարուած: Եւ այդ օրւանից մինչ հիմա Հաղարծինի վանքը եղել է մարդաշատ:

1991-ին օծուել էմ Հաղար-

ծինեանց վանքում, Սուրբ Մարիամ Աստուածածին եկեղեցում եւ Նոյեմբերեանում քահանայելով հանդերձ նրա սահմաններում, իջեւանում 2000 թուից մինչեւ 2004 թիւը Հաղարծինի վանք՝ գիշեր-ցերեկ ապրելով:

- Որքա՞ն մկրտութիւններ արած կը լինէք:

- Ամէն մկրտութիւն գրանցել ենք, բոլորը պահպանուած են Նոյեմբերեանում: Երկու հազարից աւելի կարծում եմ...

- Կուզեմայի, որ մի հետաքրքիր բան պատմէիք, կապուած այս վանքի հետ... Հրաշքներ կամ ինչ-որ խորհրդանշական բան եղե՞լ է...

- Խորհրդանշականն այն է, որ Հաղարծինը իր ազդեցութիւնը կարողացաւ թողնել շէյխի վրայ, իր գեղեցկութեամբ եւ մարդը քրիստոնեայ չլինելով հանդերձ կամեցաւ վերանորոգել այս հոգեւոր օճախը: Հրաշքներ եղել են, ես հաւատում եմ հրաշքների եւ դրանք կան: Հիւանդներ են բժշկուել եւ այլն, կարեւորը, որ հաւատով մօտենաս քո արած ծէսին ու կարգին եւ Աստուծոյ լսելի կը դառնայ քո աղօթքի ձայնը: Աստուած այստեղ է, Աստուած օգնում է եւ Աստուծոյ միջոցով մարդիկ բուժուել են:

- Հաղարծին անունը ինչի՞ հետ է կապուած, ի՞նչ ծագումնաբանութիւն ունի:

- Հաղարծին անունը մի քանի ասուածքանութիւն ունի, որոնցից մէկը Հաղարծին՝ այսինքն, արծիւների խաղալու վայր է նշանակում: Համալիրը կառուցուած է 10-13-րդ դարերում, առաջին եկեղեցին կառուցուած է 10-րդ դարում կոչուում է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, 11-րդ դարում կառուցուած է գաւիթը, որը շատ կարեւոր է եղել վանական կեանքի մէջ, հիմա կարծես այդքան էլ չի օգտագործուում իր իմաստով: Սուրբ պատարագի ընթացքում պահ կայ, որ սարկաւազը ասում է . "Մի ոք երեխայից եւ մի ոք թերահաւատից", այսինքն,

բոլոր չմկրտուածները, թերահաւատներն ու անմաքուրները պիտի դուրս գան, երբ սկսուած է պատարագը եւ աղօթեն գաւիթում եւ այնտեղից հետեւեն պատարագի ընթացքին, բայց հիմա դա կարծես չի պահպանուում:

- Իսկ աղանդաւորներ շա՞տ կան Դիլիջանի, Իջեւանի շրջանում: Կա՞ն արդեօք նրանց մէջ այսպէս ասած՝ դարձի եկածներ:

- Աղանդաւորականներին ես երբեք շատ չեմ ասում եւ արժէք չեմ համարում: Դարձի եկածներից եզակի դէպքերից մէկը Նոյեմբերեանում էր: Երկար աշխատելուց յետոյ երկու հոգի ոչ միայն դարձի եկան, այլ նաեւ մկրտուեցին եկեղեցում եւ դա եզակի դէպքերից է: Նրանք ծնունդով ադրբեջանաբնակներ էին, հիմա ապրում են Դերբեդաւան համայնքում եւ դարձի եկան: "Եհովայի վկաներ" էին, որ դարձի եկան:

- Ձրոյցի աւարտին, Տէր Հայր հայցում ենք Ձեր օրհնութիւնը, այնպէս, որ Աստուծոյ կամքով շուտ վերադառնանք այս Աստուածընկալ վայրը, որ Հաղարծինն է...

- Ես աղօթում եմ Աստուծոյ, ինդրում, որ Աստուած լսի Ձեր աղօթքի ձայնը, ձեր սրտի ցանկութիւնը, որովհետեւ ամէն մի մարդ, որ մտնում է եկեղեցի իր դրացու նկատմամբ վատ տրամադրուած, թշնամացած չի մտնի: Մարդիկ միշտ մտնում են աղօթելու իրենց ընտանիքի համար, իրենց ուխտը վերանորոգելու համար, իրենց յաջողութեան եւ առողջութեան համար եւ ես էլ աղօթում եմ ձեզ համար, որ Աստուած ձեր ուխտը վերանորոգի, վերահաստատի եւ սայ ձեր սրտի ցանկութիւնը, որը ոչ միայն ձերն է այլեւ մեր ազգինն է, որ լինենք միասնական, հօր եւ մեր աղօթքով դիմենք մեր Աստուծոյ եւ ստանանք մեր սրտի ցանկութիւնը:

- Ծնորհակալութիւն գրոյցի ու Ձեր օրհնութեան համար, Տէր Հայր:

**Armenian Cilicia Evangelical Church**  
Հայ Կիլիկիոյ Աւետարանաւորական Եկեղեցի

Will Commemorate the **97th** anniversary of the

## Armenian Genocide

By presenting

**AGHET / ԱՂԷՏ**

**FULL VIDEO PRESENTATION in English**

"Aghet: Nation Murder", is a documentary made by German filmmaker Eric Friedler, that compellingly proves the absolute truth of the genocide of the Armenian people.

Using the actual words of 23 German, American and other nationals who witnessed the events, and armed with archival materials, his film expertly takes on the challenge that the Turkish PM Erdogan hurled at the world by stating: "Prove it."

Execution of Armenians in Constantinople June 1915

Friday, April 13, 2012 7:00 p.m.

Armenian Cilicia Evangelical Church  
339 South Santa Anita  
Pasadena, CA 91107  
(626) 405 9195

## «ՔԱՋ ՆԱԶԱՐ»

### ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան  
ժամը 10:00-ից 12:30

Կլէնտոյլի 380-րդ կայանից



### ՈՒՇԻՍՈՒԹԵԱՆԴ ՏԵՍԱԿԸ ԿԸ ՍԱՐՄԱՆԵ ՔԵԶԻ ՅԱՐՄԱՐ ԵՂՈՂ ԳՈՐԾԸ

Ուշիմուծիւնը 8 տեսակներ ունի, ըստ բժիշկ Հուարտ Կարտնըրի, որ բարձրագոյն ուսման Հարվըրտ համալսարանի դասախօս է: Իւրաքանչիւր անձ պիտի գտնէ, որ ունի ուշիմուծեան տարբեր տեսակներ, եթէ ոչ բոլորը, այդուհանդերձ միայն մէկ տեսակը իր մօտ իշխած է: Կը գտնուին այդ ուշիմուծիւններէն իւրաքանչիւր տեսակին յարմարող որոշ ասպարէզներ, որոնց մէջ ենթակամ ուրիշներէն աւելի վարպետ կ'ըլլայ:

Հետեւեալը, հետեւեալ տողերը կարգալով ծանօթացիր քու ուշիմուծեանդ տեսակին՝ անոր յատկանշող հիմնական կէտերուն միջոցով եւ գիտցիր, թէ ո՞րն է քեզի յարմարող ասպարէզի ուղին:

1) Լեզուական ուշիմուծիւնը. Յայտնաբերել: Դժուարութիւն չի գտնէր յատկօրէն եւ լեզուական ճշգրիտ ռժով արտայայտուելու: Ան կրնայ դասախօսութիւն մը տալ կամ իր կարգացած գիրքի մը մասին խօսիլ եւ կամ անոր մէջ կարգացած նիւթերը արծարծել: Կը սիրէ ընթերցանութիւնը, բանաստեղծութիւնը եւ նոր լեզուներ սորվիլը:

Այս անձը կրնայ յաջողիլ ուսուցչութեան, թարգմանութեան, լեզուի զարգացման, արտայայտութիւնը բարելաւելու եւ լեզուական դժուարութիւններ ունեցող անձերը բուժելու ասպարէզներուն մէջ: Եւ եթէ այս անձը տաղանդ ունի, ան կրնայ գրագէտ մը, վիպագիր մը կամ բանաստեղծ մը դառնալ, ինչպէս նաեւ ան կրնայ յաջողութիւն գտնել գրաւոր եւ տեսալսողական տեղեկատուութեանց մէջ:

2) Շարժական-զգացական ուշիմուծիւնը.

Խնդրոյ առարկայ անձը ընդհանրապէս կը լլայ մարզիկ մը կամ ձեռային աշխատանքներու մէջ ձիրքերու տէր: Այս ուշիմուծիւնը ունեցողները կը սիրեն տունէն դուրս գալ դէպի բնութիւն եւ մարզական կիրարկումներ կատարել, որուն բոլոր արոհասները դիւրութեամբ կը սորվի: Շարժումներ շատ ունի, հարցերը կը հասկնայ փորձելով եւ ոչ միայն բացարձակ զգացողութեամբ: Անոր գործունէութիւնը եւ ուժակները կը շարժուին եթէ ստիպուի որոշ ժամանակ նստած մնալ:

Այս անձը կրնայ յաջողիլ որպէս աշխարհը դարձող եւ արկածախնդրութիւններ կատարող անձ, ինչպէս նաեւ որպէս մարզիչ, դերասան, կենսոլորտի կամ երկրաբանութեան գիտնականներ:

3) Մարզական տրամաբանական ուշիմուծիւնը.

Խնդրոյ առարկայ անձը կատէ հատուածները եւ չի սիրեր շարադրել, այլ հարցերուն մասին խորութեամբ մտածել: Կը հետաքրքրուի ձեւաւորումով, բաժանումներով եւ թիւերով, ինչպէս նաեւ առարկաներուն իրար հետ յարաբերութեամբ: Հակում ունի մարզական եւ փորձառական հարցերու հանդէպ, ինչպէս նաեւ այն խաղերուն, որոնք ծրագրաւորում կը պահանջեն: Իր շուրջ գտնուող ամէն բան թիւերու կրնայ վերածուիլ:

Այս անձը կրնայ յաջողիլ փիլիսոփայութեան, տրամաբանագիտութեան, ուսողութեան, ճարտարագիտութեան, տիեզերագիտութեան եւ բնագիտութեան մարզերէն ներս:

4) Ներգործական ուշիմուծիւնը. Խնդրոյ առարկայ անձը կը սիրէ ընկերային կեանքը: Ան ունի բազմաթիւ եւ զանազան ընկերներ եւ

շուտով բարեկամութիւններ կը կերտէ: Կը սիրէ գործել եւ արդիւնաբեր աշխատանք տանիլ իւրեւ մը պաշտօնակիցներու մէջ, որոնք իրեն խանդավառութիւն կը ներշնչեն, եւ չի սիրեր առանձին մնալ: Իր գիտցածը ուրիշին կը սորվեցնէ եւ կօզնէ ուրիշներուն՝ զանազան մարզերէն ներս:

Այս անձը կրնայ յաջողիլ որպէս ուսուցիչ, մարզիչ, ընկերային վերահսկող, հոգեբանութեան կամ դաստիարակութեան գիտութեան մասնագէտ:

5) Անձնական ուշիմուծիւնը.

Խնդրոյ առարկայ անձը կարողութիւնը ունի անձամբ ինքզինք խթանելու՝ առանց ուրիշ անձերու ներկայութեան, այսինքն՝ ինքզինք կը քաջալերէ եւ իր առած որոշումները վստահութեամբ կը տանի: Անկախականութիւնը եւ իւրայատուկութիւնը շատ կը սիրէ: Ան ինքզինքին նպատակ մը կը դնէ, գոր կը ձգտի իրականացնել, գիտնալով իր զօրաւոր եւ տկար կէտերը: Զօրաւոր կամ քի եւ անկախ կարծիքի տէր անձ մըն է: Աւելի կը լսէ քան կը խօսի, կը խոկայ գոյութեան գաղտնիքներուն մասին, կը յարգէ ժամանակը եւ գայն լաւապէս կ'օգտագործէ:

Այս անձը կրնայ յաջողիլ գիտական հետազոտութիւններու, կենսաբանագիտութեան, հոգեբանութեան, ընկերաբանութեան եւ պատմութեան մարզերէն ներս:

6) Երաժշտական ուշիմուծիւնը.

Խնդրոյ առարկայ անձը հմուտ է երաժշտական գործիք մը նուագելու, ունի լաւ ձայն, երգերուն մեծամասնութեան բառերը գոց գիտէ, եւ երաժշտական ականջ ունի: Այս անձը կրնայ յաջողիլ գրութիւններն ու արտայայտութիւնները երգերու վերածելու, նոյնիսկ թիւերը կրնան երաժշտութեան վերածուիլ: Կրնայ երաժշտութիւն ուսանիլ եթէ տաղանդաւոր է կամ կը մնայ սիրողական նախասիրութիւններու շարքին մնալ այդ կարողութիւնը:

7) Նկարչական ուշիմուծիւնը.

Խնդրոյ առարկայ անձը կրնայ իրեն ծանօթ բանաստեղծութիւն մը պատկերը կամ շարժանկարի մը պէս իր առջին առջեւէն կ'անցնի, գայն կը կապէ իր երեւակայութեան հետ, հակառակ թուանշային ուշիմութեան տէր անձին, որ բանաստեղծութիւնը տուներու եւ զանազան բառերու կտրտել: Անոր ուշադրութիւնը կը գրաւեն գոյները եւ նկարները, դիւրութեամբ կը զանազանէ ձեւերը: Վարպետ է ձեւերուն եւ գոյներուն տեղերը գտնելու եւ զանոնք նոր տեղեր դնելու:

Այս անձը կրնայ յաջողիլ ձեւաւորման, կրաֆիքսի եւ ծանուցումներու աշխարհէն ներս:

Կենսաբանական ուշիմուծիւնը.

Խնդրոյ առարկայ անձը կրնայ միաժամանակ թէ՛ աշխատիլ կամ սորվիլ եւ թէ՛ հաճելի ժամեր անցընել, ան կրնայ իրեն տրուած պարտականութիւնը կատարել եւ միեւնոյն ժամանակ հաճելի ժամանակ անցընել իր սիրած վայրին մէջ: Բնութեան կ'ըլլէ՝ ծանօթանալու անոր բոյներուն եւ հոգ տանելու անոնց, անոր կենդանիներուն՝ եւ կերակրելու անոնց: Կենսաբանական նիւթերու գիրքեր կը կարգայ եւ անոնց վերաբերեալ նկարներ կը հաւաքէ: Բնութեան եւ կենդանիներուն վերաբերող յայտագիրներուն մեծ տարփանքով կը հետեւի:

Այս անձը կրնայ յաջողիլ կենսաբանութեան, անասնաբուժութեան, երկրագործութեան, բժշկութեան եւ դեղագործութեան ասպարէզներէն ներս:

### ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆԸ ԿԸ ՏՕՆԵ ԻՐ 30 ԱՄԵԱԿԸ

Շարունակուած էջ 13-էն

Պրն. Յակոբ Լուսարարեանը բեմ հրաւիրուելով առ ի գնահատանք Մերտինեան վարժարանին ընծայած իր ծառայութեանց ստացաւ յուշատախտակ մը: Ի վերջոյ քանի օրեր առաջ, Տիկ. Անայիս Տէրեան-Պուլղուրճեան խոստացած է հոգալ վարժարանի հանդիսասրահին նորոգութեան ամբողջական ծախսը, սրահը պիտի կոչուի «Արամ եւ Անայիս Պուլղուրճեան հանդիսասրահ»:

Կիլիկեան Թեմի եւ էջմիածնական Թեմի առաջնորդներուն՝ Բարձր. Տէր Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ Բարձր. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի կողմէ ողջոյնի եւ օրհնութեան խօսքեր փոխանցեցին Արժ. Տ. Աշոտ Քհնյ. Գամպուրեան եւ Արժ. Տ. Յովսէփ Քհնյ. Յակոբեան:

Սեղաններու օրհնութիւնը կատարեց Վեր. Արա Չագրեան, ապա «Բարի Տարեդարձ»ի երգեցողութեամբ տարեդարձի կարկանդակը կտրուեցաւ: Ընթրիքի սպասարկումէն ետք, գեղարուեստական յայտագրով ելոյթ ունեցան Պրն. Բաֆֆի Քէրպպեան եւ Տիկ. Կարինէ Աւագեան, դաշնակի ընկերակցութեամբ Օրդ. Վիքթորիա Միմոնեանի:

Օրուան գլխաւոր պատգամախօսն էր հռչակաւոր իրաւաբան, Նիւ Եորք քաղաքի թմբեցուցիչներու յատուկ բաժնի ամբաստանիչ ատենի դատախազ՝ Փիթըր Ղուկասեանը: Անոր խօսքին թեման էր՝ «Ինչո՞ւ Մերտինեան» վարժարան ուղարկել մեր գաւակները՝ երկրի մը մէջ ուր ուսումը հետզհետէ աւելի «աշխարհիկ» կը դառնայ: Ինքզինք եւ իր յաճախած ուսումնական համբաւաւոր հաստատութիւնները օրինակ բերելով ան հաստատեց որ «իմաստութեան սկիզբը Տիրոջ վախն է», որ արդար ու առաքինի կ'ըլլանք երբ կը հետեւինք Տիրոջ օրէնքներուն: Մերտինեան վարժարանի մէջ երախան կը սորվի ճիշդն ու սխալը զանազանել, հաւատալ Աստուծոյ գոյութեան ու զօրութեան, ինչպէս հաւատացին մեր նախահայրերը եւ իրենց կեանքի գնով պաշտպանեցին գայն: Պրն. Ղուկասեան խօսքը ամբողջացուց ըսելով «Այսօր այստեղ հաւաքուած ենք, որովհետեւ կը հաւատանք, որ աւելի նուիրական պարտականութիւն չունինք՝ քան մեր գաւակները մեծցնել իրենց իսկական չօր համար»:

Երեկոյթի ընթացքին խօսք առին Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելըսի հիւպատոս Պրն. Գրիգոր Յովհաննիսեանը, ԱՄՄԱ-ի կողմէ Տոքթ. Ճօ Զերոնեանը, Օրդ. Հէլէն Հայկը եւ Տիկ. Անայիս Տէրեան-Պուլղուրճեանը: Բոլորն ալ

հաստատեցին Հայ դպրոցին անհրաժեշտութիւնը եւ անոր տարած աշխատանքին կարեւորութիւնը՝ սիրելով տարածքին, իրենց ուրախութիւնը յայտնեցին Մերտինեան վարժարանի 30-ամեայ յոբելեանին առթիւ եւ վերանորոգեցին իրենց ուխտը սատարելու անոր գոյութեան:

Վերջին խօսք առնողը եղաւ վարժարանի նոր տնօրէնուհի Տիկ. Լինա Արսլանեանը. Ան ողջունեց ներկաները, իր երախտագիտութիւնը յայտնեց երազ մը իրականացնող, գայն ամուր հիմերու վրայ դնող եւ անոր գոյութիւնը պաշտպանող բոլոր այն անհատներուն ու կազմակերպութիւններուն որոնց «կորովը, աշխատանքը, նուիրումը, գոհողութիւնն ու յարատեւութիւնը» կենսայորդ աւելը եղան 30 ամեայ Մերտինեան վարժարանին:

Եւ վերջապէս, երեկոյցին յատուկ փայլք տուին Մերտինեան վարժարանի շրջանաւարտներէն 10 երիտասարդ-երիտասարդուհիներ, որոնք եկած էին երախտագիտութիւն յայտնելու իրենց երկրորդ տան ու ծնողքին՝ այն ամէնուն համար, որ գիրքնք դարձուցած էր այսօրուան անհատը: Անոնք կենդանի փաստն էին Մերտինեանի տարած սրբազան աշխատանքին: Անոնցմէ իւրաքանչիւրը ներկայացուց ինքզինքը, ապա բոլորին անունով օրդ. Ատրինէ Գասպեանը փոխանցեց իրենց զգացումներն ու մտածումները: Ան ըսաւ «Եթէ մեզմէ իւրաքանչիւրը առանձին չիշատակ մը ունի Մերտինեանէն, բայց բոլորս կը բաժնենք կարգ մը զգացումներ, որոնք ընդ միշտ պիտի մնան մեր մէջ: Արդարեւ Մերտինեանը մեզի տուած է ամրակու ուսում, գիտութիւն, մեր մէջ զօրացուցած է մեր հայրերու դարաւոր քրիստոնէական հաւատքը, ձեւաւորած է մեր նկարագիրը, անհատականութիւնը եւ վերջապէս մեզ դարձուցած է հպարտ, գիտակից հայեր: Երախտապարտ ենք բոլորս ալ, թէ մեր ծնողներուն եւ թէ մեր տնօրէններուն եւ ուսուցիչներուն, որոնց անսահման սէրն ու գուրգուրանքը տակաւին կը զգանք յուզումով...»: Ապա խօսքը վերջացուց ըսելով՝ «Կը հասկնանք, բոլորս ալ, որ Մերտինեան Հայ Աւետարանական վարժարանի շրջանաւարտներու ուսերուն պատասխանատուութիւնն ներդրուած են, սիրով կը ստանձնենք զանոնք, հետեւելով մեզ պատրաստողներու օրինակին»:

Երեկոյն վերջ գտաւ Վեր. Ճօ Մաթոսեանի «արձակման աղօթքով: Ներկաները սրահէն հեռացան իրենց հետ տանելով 30ամեակի յուշանուէր սուրճի բաժակ մը, բայց մանաւանդ Մերտինեանի մեծ ընտանիքին մաս կազմելու հպարտութեան զգացումը:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՎ**  
**ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՇՈՓԻ ՎԱՄԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՎԱՄԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՆՆԵՐ՝**  
**ՇՈՒՂԱՅՆԵԼ (626) 797-7680**



### ՈՐՊԵՏՁԻ ԿԱՆԽՈՒԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Շարունակում է 1-ին

կողմերու միջև փոխադարձ հասկացողութեան, վստահութեան եւ ինքնավարութեան դուրս գալուն, յանուն՝ ժողովուրդի եւ հայրենիքի:

ՄԱԿ-ի եւ Արաբական Լիգայի կողմէ լիազօրութեամբ Գոֆի Անանի խաղաքարար միջնորդական առաքելութիւնը, որ ներշնչուած կը բուռն ըլլալ Արաբական Լիգայի, Եւրամիութեան եւ ԱՄՆի միակողմանի դիտակցութեամբ՝ յաջորդական ձախողութիւններու կը հանդիպէր Զինաստանի եւ Խորհրդային օրերէն ի վեր Սուրիոյ դաշնակից Ռուսիոյ կողմէ: Անոնք դէմ կը գտնուէին Եւրամիութեան եւ ԱՄՆի կողմնակալ միջամտութիւններուն, նիւթական, դիտակցութեան եւ Բաղդադի պատժական միջամտութեան նախաձեռնութիւններուն եւ այլաբանօրէն սպառնալիքներուն, օգտագործելով ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդէն ներս իրենց ունեցած վերջնական:

Այսօրուան դրութեամբ, նկատարելի են դրական գարգացումներ, որոնք կը խոստանան մեղմացնել կողմերու միջեւ առկա կործանարար զգուշացումները: Իր խաղաքարար միջնորդութեան գորակցութիւնը հայցելու միտումով Մոսկուա իր այցելութեան ընթացքին՝ ՄԱԿի Ընդհանուր Քարտուղար Գոֆի Անանի հանդիպում մը ունեցաւ դէպի հարաւային Գորբայի մայրաքաղաք Մեքո, միջուկային անվտանգութեան գերաստիճանի ժողովի մասնակցելու նամակով վրայ, Մոսկուայի Վեոնովօ օդակայան ժամանած Ռուսիոյ նախագահ Տիմոֆեյ Մեդվեդեւի հետ: Մեծ վեճեր իր ամբողջական գորակցութիւնը յայտնած է Անանին, յայտարարելով, որ Ռուսիա պիտի օժանդակէ իր առաքելութեան յաջողութեան, իր օգնութիւնը բերելով բոլոր մակարդակներու եւ ուղղութիւններով վրայ, հոն ուր Ռուսիա կարելիութիւնը ունենայ: Ան՝ եզրակացուցած է իր խօսքը դիտել տալով, որ Անանի այս առաքելութիւնը վերջին առիթն է, որ կրնայ առաջին առնել երկրին սպառնացող մօտակայ քաղաքական արիւնոտ պատերազմին:

Այս կապակցութեամբ անկէ-նեմ նաեւ, թէ Զինաստան, նոյնպէս, ձայնակցած է Ռուսիոյ, ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդէն ներս միասնաբար փութարկելով նախագահական յայտարարութիւն մը, որ կու գար պատգամել բոլոր կողմերուն, գորավիզ կանգնել Գոֆի Անանի խաղաքարար առաքելութեան, որ կ'առաջադրէր վերջ տալ բոնոսիւններուն, նաեւ պահանջելով Սուրիայէն, որ անյապաղ գործադրէ հարցերը կարգադրելու անոր առաջարկութիւնները:

Ռուսիոյ այս նորագոյն կեցումովէն խանդավառ Գոֆի Անանի իր գոհունակութիւնը յայտնած է դիտել տալով, թէ կը վստահի Ռուսիոյ ցոյց տուած քիչուցիկ: Բառացի ըսած է ան. «Ինչպէս միշտ, իսկապէս կրնանք վստահիլ անոր խոստացած աջակցութեան եւ դրական խորհուրդներուն»:

Ինչ կը վերաբերի Սուրիոյ տագնապին մօտէն առնչուած եւ ծայրայեղօրէն նախագահ Պաշար Ասատի գահակցումը պահանջող Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահ Պարաօ Օպամայի՝ Անանի այս առաքելութեան կապակցութեամբ ունեցած կեցումովին՝ Մեքոյի մէջ յայտարարած է ան, թէ այսուհետեւ Ռուսիոյ հետ համաձայն է գորավիզ կանգնել Գոֆի Անանի առաքելութեան, «որպէսզի վերջ տրուի Սուրիոյ արիւնայեղութեան, քանի, բոլորին հիմնական նպատակը՝ հոն օրինակային իշխանութիւն մը հաստատելն է»:

ՄԱԿի Ընդհանուր քարտուղարի խաղաքարար ծրագիրը կ'առաջադրէ բոլոր կողմերուն՝ ՄԱԿի վերահսկողութեան տակ դադարեցնել ամէն կարգի բռնութիւն, ապահովել մարդասիրական օգնութիւն եւ ազատ արձակել այն բոլոր քանտարկեալները, որոնք պարագայարար ձեռքարկուած են:

Կարելի պիտի ըլլա՞յ յուսալ, որ այսպէս կոչուած մեր աշխարհի մեծերը, արժանապատիւ կերպով պիտի յարգեն իրենց տուած խոստումը, որպէսզի կանխուի կործանարար քաղաքական պատերազմ մը, ասպնջական նախնայութեամբ ժողովուրդի մը պատմական հայրենիք Սուրիոյ մէջ:

### ՀԱՅ ԱՒԵՏ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐՓԱՐԱՆԸ 90 ՏԱՐԵԿԱՆ Է

Շարունակում է 13-ին

նագրած է եւ հասած 296ի: Ատենապետին խօսքին ընթացքին պատասառին վրայ ցուցադրուեցան տնօրէն-նուէրին՝ Մարալ Տէյրմէնճեանին պատրաստած մէկ տարուան ուսումնական տարեշրջանի վարժարանի յաջողութիւններն ու իրագործումները փոխանցող լուսանկարները, որուն առիթի բաժինը գրաւած էին նորաբաց մանկամասերին դասարաններն ու աշակերտները:

Ան մէջբերեց Կեդրոնական Բարձրագոյն Վարժարանի շրջանաւարտներէն՝ գիտնական Տօքթ Գնել Դուրեանի ակնաստեսի վկայութիւնը.

«Վերջին այցելութեանս ընթացքին եկայ այն եզրակացութեան, թէ ԿԲՎ-ը է՝ ու կը մնայ Պէյրութի գերագանցիկ երկրորդական վարժարանը: Տնօրէնուհին՝ Մարալ Տէյրմէնճեանը բացառիկ աշխատանք կը տանի ուսուցչական կազմին եւ աշակերտներուն հետ, որպէսզի ԿԲՎ-ը դառնայ Պէյրութի հայկական դպրոցներու երազները փայտաշէն իտէալ դպրոցը»:

2012ի «Տարուան ուսուցիչ» պատիւին արժանացաւ, ԿԲՎ-ի հայերէն լեզուի սիրուած ու յարգուած ուսուցչուհի՝ Անի Յակոբեան-Սահակեանը: Ձինք արժանաւորապէս ներկայացուց Շրջանաւարտից Միութեան անդամներէն՝ Էլօ Սահակեան:

Տիկ. Անի Յակոբեան-Սահակեան իր կարգին փոխանցեց, թէ երեսունեք տարի ետք դպրոցական օրերու իւրաքանչիւր պատկեր, ուսուցչական կազմը, չիշատակելի պատկերներով աչքին առջեւէն կ'անցնին եւ պատճառ կը դառնան, որ ինք դարձեալ երիտասարդութեան սեմին գտնուի եւ վերապրի կեանքին ամենէն ուրախ եւ չիշատակելի օրերը: Իր խօսքի աւարտին ան թելադրեց մնալ հայասէր եւ զայն փոխանցել գալիք սերունդներուն:

Բաֆֆի Քերպպեան իր իւրաքանչիւր ձայնով մենեղեց «Միւրեյի ուսուցիչ» եւ «Բարի Արագիլ» երգերը: Անայիս Ֆրունճեան եւ Լուի Ինճեճիկեան հեղաձուլու շարժումներով պարեցին Կոմիտասի «Վաղարշապատ» պահը, իսկ Դալար եւ Լիւսի Մինասեաններ ներկայացուցին Անուշ եւ Ինգա



Գարրիէլ Ալպարեան եւ Սահակ Շամլեան

Արշակեաններու «Նոր պար»ը: «Տարուան շրջանաւարտ»ն էր ԿԲՎ-ի Ամերիկայի Շրջանաւարտից Միութեան հիմնադիր անդամներէն եւ անոր մղիչ ուժը հանդիսացող՝ Պրն. Գարրիէլ Ալպարեան, որ ներկայացուցեց Սահակ Շամլեանի կողմէ:

Պրն. Գարրիէլ Ալպարեան իր խնդրութիւնը արտայայտեց ի տես իր եւ խումբ մը նուիրեալ շրջանաւարտներուն հիմնած միութեան ու անոր նոր անդամներուն անսակարկ նուիրումին, շարունակականութիւնը տեսնելով անոր մէջ: Ան իր անսակարկ գորակցութիւնը յայտնեց Շրջանաւարտից Միութեան եւ շնորհակց, թէ ԿԲՎ-ը մղուններով որքան լա հեռու ըլլալ մեզմէ իր չիշատակներով մեր սրտերը տաքնող հասարակաց կեդրոնը պիտի մնայ:

Սեպուհ Նաճարեան մենեղեց Սայեաթ Նովայի «Քամանչա»ն, որմէ ետք իր սրտի խօսքը ըսաւ տիկ. Մէլի Գոնեալեան:

Հիմնադրութեան 90 ամեակի կարկանդակը հատեցին ԿԲՎ-ի նախկին տնօրէններ, Արամ Պուլլուրճեան, Յակոբ Լուսարարեան եւ ԿԲՎ-ի շրջանաւարտ՝ Մանուկեան-Տէմիրճեան վարժարանի տնօրէն՝ Յակոբ Յակոբեան եւ Միութեան ատենապետ Սահակ Շամլեան:

Գօգօ Հայրիթեանի ստեղծած խանդավառ միջոցառումը, պարելու առիթ ստեղծեց եւ ներկաները բարձր տրամադրութեամբ տուն վերադարձան:

ԿԲՎ-ի ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻՑ ՄԻՈՒԹԻՒՆ

### «ՊՈԼՍՈՅ ՅՈԼԱՅՈՒՄՆԵՐ»

Շարունակում է 7-ին

ժողովրդականութիւն կը վայելէ թէ Մայր Հայրենիքի եւ թէ արտասահմանի մէջ:

Պոլսահայ Միութեան վարչութեան ժրջան ատենապետ Էտիկ Նազարեան, խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեց սոյն միջոցառումի յաջողութեան սատարող բոլոր յանձնախումբերուն եւ օրուան յայտագրին մաս կազմողներուն:

Ելոյթ ունենալով թեմիս բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, ինք եւս շնորհաւորեց կազմակերպիչները՝ երգչուհի Միպիլն ու բեմադրիչ Էրիկ Նազարեանը, մաղթելով որ

իրականութիւն դառնան իրենց երազները եւ յաջողութեամբ պսակուին:

Այս առիթը չիշատակի նուէրներ փոխանցուեցան յայտագրի գլխաւոր մասնակիցներուն, որմէ ետք յարակից սրահին մէջ տեղի ունեցաւ ընկերային ժամ եւ ճոխ հիւրասիրութիւն:

Ներկաները Պոլսահայ Միութեան նորակառոյց կեդրոնէն բաժնուեցան իսկական պոլսական երեկոյ մը վայելած ըլլալու գոհունակութեամբ:

Կը շնորհաւորենք կազմակերպիչները պատշաճ մակարդակով պատրաստուած այս տպաւորիչ եւ գեղեցիկ նախաձեռնութեան համար: Գ. Մ.

**ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ**  
Գնահատելով «Մասիս»ի շաբաթաթերթի բովանդակութիւնը մի օմն կը նուիրէ \$100 տոլար:

**ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ**  
Մի օմն գնահատելով «Մասիս»ի բովանդակութիւնը եւ մաղթելով նորանոր յաջողութիւններ \$100 տոլար կը նուիրէ «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**  
1060 North Allen Ave  
Pasadena, CA 91104  
Գրասենեակները վերանորոգուած  
եւ յարմար վարձքերով  
Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
(626) 398-0506



### ՑԱԲԱԿՑԱԿԱՆ ԳԵՆՈՍ ՄԻՆԱՍԻ ԻՍԿԱՆԴԱՐԵԱՆ

ԱՄՆ-ի հայ վեթերանների միութեան շարքերը պակասեց եւս մէկ վեթերանով: 93 տարեկան հասակում յանկարծամահ լինելու պատճառով կեանքից հեռացաւ երկրորդ համաշխարհային պատերազմի մասնակից, 147-րդ գումարտակի ջոկի հրամանատար ԱՄՆ-ի հայ վեթերանների միութեան անդամ Գենոս Իսկանդարեանը: Գենոսը ծնունդ էր 1919 թ. Օգոստոսի 1-ին Սիսիանի Թասիկ գիւղում: Աւարտելով տեղի միջնակարգ դպրոցը, ուսումը շարունակում է Նախիջեւանի մանկավարժական ուսումնարանում իսկ որոշ ժամանակ անց տեղափոխուում է Շուշիի ռեալական ուսումնարան: 1939 թուականին գերագանցութեան դիմումով աւարտելով ուսումնարանը գործուղում է աշխատելու Հայկազնի միջնակարգ դպրոց՝ որպէս ուսուցիչ: Պայթում է մեծ հայրենական: Եւ Գենոսը, թողնելով սիրած աշխատանքը, երկու եղբայրների հետ մեկնում է ճակատամարտ: 1941 թ. Յուլիսից Գենոսը գտնուում էր Տուսպսիի պաշտպանութեան կրակագծում: Աւարտելով սերժանտական դպրոցը նշանակում է 56-րդ գնդի հրետանու 147-րդ գումարտակի ջոկի հրամանատար: Գենոսը, ինչպէս վայել է քաջ հայրերուն, ողջ պատերազմի ընթացքում աչքի է ընկնում իր կարգապահութեամբ, խիզարիտութեամբ եւ առաջադրանքները կատարելու վարպետութեամբ: Եւ 1945 թ. հայ եւ այլազգի քաջարի ու հայրենամուէր զինուորների անձնագրութեան շնորհիւ եկաւ սպասուած յաղթանակը: Գենոս Իսկանդարեանը տուն վերադարձաւ կործքը գարդարուած բազմաթիւ շքանշաններով: Յետպատերազմեան տարիներին վաստակաշատ վեթերանը աշխատում է մի շարք դպրոցներում, կարեւոր նշանակութիւն ունեցող հիմնարկ-ձեռնարկութիւններում գեղեցիկ ղեկավար պաշտօններ: 1993 թուին իր դատեր ժաննայի եւ փեսայ՝ Մանուկի հրաւերով մեկնում է Ամերիկայի Միացեալ Նահանգներ: Հաստատուելով Լոս Անճելոսում շուտով նա անդամագրուում է երկրորդ համաշխարհային պատերազմի Կլեմտէյի հայ վեթերանների միութիւնում, որը 2010 թուականին վերանուանուեց ԱՄՆ-ի հայ վեթերանների միութիւն: Եւ Գենոս Իսկանդարեանը մինչեւ իր մահը մնաց այդ միութեանը հաւատարիմ, կարգապահ, ակտիւ ու սիրուած անդամը:



ԱՄՆ-ի հայ վեթերանների միութիւնը յայտնում է իր խորին ցաւակցութիւնը Գենոսի բոլոր հարազատներին ու ընկերներին: Փառք քեզ գուարդիայի աւագ սերժանտ Գենոս Իսկանդարեան, թող հողը թեթեւ լինի վրադ եւ քո անմար յիշատակը միշտ վառ կը մնայ քո հարազատների, մարտական ու աշխատանքային ընկերներիդ եւ ԱՄՆ-ի հայ վեթերանների միութեան բոլոր անդամների յիշողութեան մէջ: Եւ գուր չի ասուած. «Ոչ ոք չի մոռացուել, ոչինչ չի մոռացուի...»:  
ԱՄՆ-ի հայ վեթերանների միութեան անդամներ

### ՑԱԲԱԿՑՈՒԹԻՒՆ

ԱԻԱԳ ՍԱՐԿԱԻԱԳ ԱՐՇԱԿ ԵՂԲ. ԳԱԼԷՆՏԵՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան եւ ընտանիք կը յայտնեն իրենց խորագգաց ցաւակցութիւնները հանգուցեալի հարազատներուն եւ բոլոր պարագաներուն:  
Առ այդ \$100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:

### ՑԱԲԱԿՑՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒՍԵԱԿ ՍԻՆԱՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան եւ ընտանիք կը յայտնեն իրենց խորագգաց ցաւակցութիւնները հանգուցեալի համայն հարազատներուն եւ պարագաներուն, յատկապէս Տէր եւ Տիկ. Կէրի եւ Սուզաննա Սինանեանին:  
Առ այդ կը նուիրեն \$100 տոլար «Մասիս»ին:

### ՑԱԲԱԿՑՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒՍԵԱԿ ՍԻՆԱՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով Ալբեո Մինասեան կը յայտնէ իր խորագգաց ցաւակցութիւնը հանգուցեալի համայն հարազատներուն եւ պարագաներուն, յատկապէս Տէր եւ Տիկ. Կէրի եւ Սուզաննա Սինանեանին:  
Առ այդ կը նուիրեն \$50 տոլար «Մասիս»ին:

### «ՄԵՐ ՈՂՋ ԱԲԱՆԴՈՅԹԸ ՓՈՇԻԱՆՈՒՄ Է ԵՒ ԱՆԿԵՐԱԴԱՐՁ ԿՈՐՉՈՒՄ»

Շարունակուած էջ 14-էն

րան: Միայն արեւելեան կարպետների մասին պատմող 2000 հատոր գիրք ունենք: Ունենք հայոց Յեղասպանութեանը վերաբերող գրքերի մի մեծ հաւաքածու, եւ բազմաթիւ այլ գրքեր՝ հայերէն, անգլերէն, այլ լեզուներով:  
Բացի այդ, 1970-անների սկզբներին, երբ նոր էինք այս ամէնը ձեռնարկում, մենք գիտակցեցինք, որ ցեղասպանութիւնից փրկուածների մեծ մասը ծեր է, եւ որ պէտք է նրանց բանաւոր պատմութիւնները ձայնագրել: Մենք գրեթէ դադարեցրինք բոլոր գործերը եւ կենտրոնացանք այդ մարդկանց պատմութիւնները ձայնագրելու վրայ: Այդ բոլոր մարդիկ արդէն չկան, մահացել են: Այժմ մենք ունենք 400-600 բանաւոր պատմութիւնների հաւաքածու՝ ձայնագրուած սկաւառակների վրայ:  
-Ի՞նչ ցուցադրութիւններ ունի թանգարանը:  
-Մենք պարբերաբար ցուցահանդէսներ, դասախօսութիւններ, ծրագրեր ենք իրականացնում: Մի քանի տարի առաջ մենք կազմակերպեցինք «Հրջիկ ցուցահանդէսներ», դրանցից մէկը կրում էր "Ովքե՞ր են հայերը" խորագիրը:  
Նման մի ցուցահանդէս պատրաստեցինք նաեւ «Կամաւորներ» թեմայով: Խօսքն այն հայերի մասին է, որոնք Ամերիկայից մեկնեցին Ֆրանսա՝ ֆրանսական լեզունների հետ թուրքերի եւ գերմանացիների դէմ պայքարելու: Այդ ցուցահանդէսը ամբողջ երկրով է ճամբորդում:  
Մենք ունենք Յեղասպանութեանը նուիրուած շրջիկ ցուցահանդէս: Այդ ցուցահանդէսն այժմ պատրաստուած է տեղափոխուել Հո-

լոքոտին նուիրուած Ամերիկայի ամենախոշոր թանգարաններից մէկը՝ Վիրժինիայում: Թանգարանը ցանկութիւն է յայտնել մէկ տարով վարձակալել այն:  
Այսպիսով՝ աշխարհագրորէն մենք ընդլայնում ենք: Այս պահին մենք ունենք ոչ միայն ազգային, այլ նաեւ միջազգային համբաւ: Մենք տարբեր երկրներից ստացել ենք խնդրանքներ՝ ցուցադրման համար որոշ առարկաների վարձույթի վերաբերեալ: Ահա եւ մեր պատմութիւնը:  
-Այլ համայնքների ներկայացուցիչներ հետաքրքրուած են Հայկական ժառանգութեան թանգարանով:  
-Ընդհանրապէս Ամերիկայում թանգարանների հանդէպ հետաքրքրութիւնը մեծ չէ: Սակայն Ապրիլին՝ Յեղասպանութեան յիշատակման օրը, մենք միասնական միջոցառումներ ենք կազմակերպում հրեաների, ուսանողացիների հետ: Ես փորձում եմ ոտնակապերի ցուցահանդէս կազմակերպել իւրանդացիների հետ համատեղ, քանի որ նրանք էլ ոտնակապեր ունեն:  
Մի քանի միասնական շնորհանդէսներ ենք կազմակերպել էթնիկ այլ խմբերի ներկայացուցիչների հետ: Շուտով Հարվըրտի համալսարանում նախանշուած է հնագոյն հայկական գրքերի ցուցահանդէս՝ նուիրուած հայ տպագրութեան 500-ամեակին: Մենք մեր գրքերով աջակցելու ենք այդ ցուցահանդէսին:  
Հարցազրոյցը՝ «Արմեդիա» ՏՎԳ-ի Իրականացուել է ԱՄՆ Պետքարտուղարութեան օժանդակութեամբ իրականացուող «Քաղաքականութիւնից այն կողմ. ամերիկեան ոգի» ծրագրի շրջանակներում

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՔԱԿԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Շարունակուած էջ 8-էն

լիստների, այլեւ սփիւռքի տարբեր համայնքներ ներկայացնող երիտասարդ ուժերի:  
Պասքեթպոլի երեքմի անուանի մարզիկ Ա. Համամջեանը երիտասարդ պասքեթպոլիստներին ներկայացրեց 1940-ականների վերջին Հայաստանի ազգային հաւաքականի ձեւաւորման պատմութիւնը: Այն ժամանակ հայ պասքեթպոլիստները մեծ յաջողութիւնների էին հասել ԽՍՀՄ շրջանակներում: Համամջեանը երիտասարդներին յաջողութիւն մաղթեց միջազգային մրցասպարէզներում:  
Լոս Անճելոսում ՀՀ գլխավոր հիւպատոս Գրիգոր Յովհաննիսեանը ուրախութիւն յայտնեց, որ Հայաստանի պասքեթպոլի ազգային հաւաքականի կազմը ձեւաւորելու պատասխանատուութիւնն ընկած է լոսանճելոսահայ համայնքի ուսերին, քանի որ հենց այս համայնքում ձեւաւորուած են մարզական լաւ ակումտներ, գործում են բազմաթիւ մարզական ակումբներ, որոնց սաները մէկ անգամ չէ, որ յաջողութիւններ են գրանցել

տարբեր մրցասպարէզներում: Վերջին լաւագոյն օրինակը Համահայկական խաղերի ընթացքում հայ պասքեթպոլիստներին գերազանց խաղն էր, որի շնորհիւ նրանք հայրենիքից վերադարձան բարձրագոյն մրցանակներով:  
Հայաստանի պասքեթպոլի ազգային հաւաքականի մարզիչ Կառլ Բարդակեանը նշեց, որ հաւաքականն ունի թէկուզ մէկ ամիս յետոյ միջազգային մրցաշարերին յաջող մասնակցելու ներուժ: Նա տեղեկացրեց, որ նորաստեղծ թիմի համար առաջին փարձութիւնն ըստ ամենայնի կը լինի Յունիսի իտալիայում կայանալիք FIBA-ի առաջնութիւնը, որին մասնակցելու յայտ են ներկայացրել 7 երկիր: Հայաստանը կը լինի 8-րդը:  
Համայնքի վաստակաշատ մարզիկները յաջողութիւն մաղթեցին կրտսեր գործընկերներին՝ վստահութիւն յայտնելով, որ լաւ պատրաստուածութիւնը, հայրենասիրութիւնն ու անպայման յաղթելու հաստատակամութիւնը, որ նկատուում են նորաստեղծ խումբի անդամների մէջ, արդէն իսկ յաջողութեան հասնելու նախապայման են:

ArmenienInfo.net  
News. Informationen. Kommentare.

Հայ news.am



USC INSTITUTE OF ARMENIAN STUDIES  
Leadership Council



*Seventh Anniversary Gala Banquet  
in honor of the*

USC SHOAH FOUNDATION INSTITUTE  
FOR VISUAL HISTORY AND EDUCATION



*for championing the*

ARMENIAN GENOCIDE DIGITIZATION PROJECT



**SUNDAY, APRIL 15, 2012**  
RECEPTION 5:30 PM  
DINNER 6:30 PM

**DON'T LET  
THEIR VOICES  
BE FORGOTTEN.**

**THE BEVERLY HILTON**  
INTERNATIONAL BALLROOM  
9876 WILSHIRE BOULEVARD  
BEVERLY HILLS, CALIFORNIA 90210

**FOR INFORMATION CONTACT**

ELIZABETH AGBABIAN (310) 476-5306 • DIANE CABRALOFF (562) 943-1081  
ALICE CHAKRIAN (818) 388-6734 • LORI MUNCHERIAN (310) 936-4758  
SAVEY TUFENKIAN (818) 956-8455

**USC Dornsife**

Dana and David Dornsife  
College of Letters, Arts and Sciences